

891.99  
P-88

129

- 26/1/39

Հայոց բանական պատմութեան

694. XVII

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄՑՆԵՐՆԵՐ

Ա. Խ.

# ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1892—1899

Հ. Խ.



ՊԻՏԱԿԱ

1899

891.99

6 NOV 2011

5694

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՄՆԵԱՆՑ

891.99

թ-88

Ա. Վ.

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1892—1899

6091  
6091



ԹԻՖԼԻՍ  
Տպագր. Հայտ. Ընկ. || Տպոգր. Գրադ. Իզդ. Տ-վա.  
1899

19 APR 2013

31944

Ե Բ Ա Զ

Дозволено цензурою. Тифлисъ, 13 марта 1899 года.

Վարդերի միջին ման եկայ երկար,  
Բայց իմ ուզածը նոցա մէջ չը կար.—  
Ես տանջւում էի... Եւ երգ հիւսեցի  
Իմ տանջանքներից, նորան ձօնեցի:

Բայց նա ունկընդիր չ'եղաւ իմ երգին,  
Երգս օտար էր նորա պաղ սրտին—  
Յուսահատ լացի ես սիրաբորբոք.  
«Մի լար, դու պօէտ!» չ'ասաց ինձ ոչ:

Եւ ահա լանկարծ օրհասիս վերջում,  
Երբ ինեղդւում էի վշտերի ծովում,  
Փարոսի նման դու երևացիր,  
Յուսով ու լուսով կեանքս փրկեցիր:

Հէնց որ հրճւանքով գրկեցի ես քեզ,  
Կըծքիս սեղմեցի խելագարի պէս,  
Իսկոյն չքացար, թռամը յաւիտեան...  
Ախ, անգութ երազ! ուր գտնեմ նորան?

Եմ այս գուշակ զանազան ամ  
Եմ այս գուշակ սիրահամ ամ  
Ամ այս գուշակ Սահ ու յան համար ամ  
Եմ այս գուշակ ամ սուրբ Հով ամ  
Համար ամ գուշակ եմ ամ

### ՈՐ ԻՄ ՍԻՐՑԸ ՀԱՍԿԱՆԱԾ

**Մ**իթէ պիտի մութ գիշերով  
Քո տան առաջ թափառեմ,  
Եւ սիրալին սերենադով  
Քաղցր քունըդ խանգարեմ,  
Որ իմ սիրտը հասկանաս?

**Մ**իթէ պիտի ոսկէ լարով  
Փառաբանեմ քո աչեր,  
Եւ մելանոյշ բարբառներով  
Նոյեմ չքնաղ քո պատկեր,  
Որ իմ սիրտը հասկանաս?

**Մ**իթէ պիտի քո առաջին  
Ես ծնկաչոք հառաչեմ,  
Աղցունք թափեմ, լամ դառնադին,  
Երկըրպագեմ ու երդւեմ,  
Որ իմ սիրտը հասկանաս?

Իմ սիրատանջ, մռալլ դէմքիս,  
Իմ վշտալից աչքերում,  
Դժգնած, անխօս շըթունքներիս  
Միթէ սէրըս չես կարդում,  
Որ իմ սիրտը հասկանա՞յ

Եղանակ առաջ պահպան բնակին  
Վահագութ առաջ պահպան բնակին  
Առաջ պահպան պահպան բնակին  
Վահագութ առաջ պահպան բնակին  
Եղանակ առաջ պահպան բնակին  
Վահագութ առաջ պահպան բնակին  
Առաջ պահպան պահպան բնակին  
Վահագութ առաջ պահպան բնակին

### Հ Ա Ա Փ Ե Յ Ց

Հառւած «Ծովի աղջիկը» պօէմայից

Եւ յանկարծ հնչեց սուլիչն ուժգին,  
Նաւի շարժւելը յալտնեց ամենքին...  
Վիթխարի նաւը թնչաց, հառաչեց,  
Ծխի ամպերը երկինք վերացրեց:

Նաւը պատառեց արծաթ ջրերը,  
Փրփուր-յորձանքով պատեց կողքերը,  
Վիշապի նման՝ առաջ ընթացաւ,  
Նաւահանգստից գնաց, հեռացաւ:

Մարին կանգնած է տախտակամածին,  
Իսկ ալրի մալրը ծովի եզերքին.  
Մարին լալիս է, հեռաստան նայում  
Ու թաշկինակը ծածանում օդում:

Այնտեղ մայրիկը արցունքը աչքին՝  
Ղրկում էր երկինք աղօթք ջերմագին.  
Արևն էլ վերից պայծառ շողալով՝  
Օրհնանք էր թափում, թէ աշխարհ,  
թէ ծով:  
Նաւը հեռացաւ,  
Նաւը փոքրացաւ.  
Կապոյտ երկնքի հետ  
Սլիքը վէտ-վէտ  
Իրար միացան  
Եւ նաւը տարան...

Ըստու պատմութիւններ պատման  
Տարբան է եւ առ առ առ առ առ  
Համար կ սկ կ սկ սկ  
(Պուշկինից)

**Կովկասի գլխին, առապարի մօտ,**  
**Կանգնած եմ մենակ կատարին ձիւնոտ.**  
**Ս.ըծիւը, հեռու գագաթից թռած,**  
**Սնշարժ ճախրում է օդում իմ գիմաց:**  
**Այստեղ տեսնում եմ ծնունդ ջրերի**  
**Եւ սկզբնական շարժումը հիւսի:**

**Մեղմիկ լողում են իմ տակով ամպեր,**  
**Գլորւում են ցած յուզւած ջրվէժներ.**  
**Ամպերի տակին ժայռեր են գիզւած,**  
**Ցածումն էլ մամուռ, թփեր չորացած.**  
**Իսկ այստեղ—պուրակ, կանաչ և ըստեր,**  
**Երգող թռչուններ, վազող եղնիկներ:**

Եւ այն լեռներում մարդիկ են ապրում,  
Առազարներով հօտեր սողոսկում.  
Դէպի հովիտն է իջնում խաշնարած,  
Ուր Արագւան է վազում փրփրած,  
Եւ ձիաւորը պահւում է կիրճում.  
Ուր Թերեք գետն է մոլեգնած խաղում:

Գետը, վանդակից կերակուր տեսած  
Զահէլ վագրի պէս, գոչում է կատղած.  
Նա թշնամաբար ափին է զարնւում,  
Քաղցած ալիքով ժայռերը լիզում...  
Զուր! Անմիխիթար և անկերակուր՝  
Համը ժայռերից ճնշում է ամուր:

N.Ի՞ն


Եթէ ինձ պիտի դաւաճանէիր,  
Ինչու ժպտերես, խանդով սիրալիր  
Դու ինձ սեղմեցիր կըծքիդ կուսական  
Եւ ինձ խոստացար սիրել յաւիտեան?

Եթէ դու պիտի ինձ մոռանալիր,  
Դառնութեան ծովը ինձ տապալէիր,  
Էլ ինչու մտար սրտիս խորքերը,  
Նարժեցիր հոգուս քնքոյշ լարերը?

Եթէ դու պիտի սիրտս հըրավառ  
Թոյնով լցնէիր, փշքէիր իսպառ,  
Էլ ինչու նորան դու կախարդեցիր,  
Բուռն հրճւանքով այնպէս թնդացըիր?

Անծանօթ էր ինձ սէրը բընաւին,  
Եւ անդորր էր, խաղաղ իմ հոգին.  
Իմ հանդիստ սրտում հըդէ՛ս վառեցիր,  
Հէտ երդչիս համար տանջանք նիւթեցիր...

Օ՛, աղուլեղի դառան իմ հրճւանք  
Եւ քո խաբուսիկ համբոյր ու գգւանք!  
Մթնեց երկինքը, մթնեց ինձ համար,  
Յոյսըս խորտակւեց, սեացաւ աշխարհ!...



Ե Ի Ե Ց Ի Ս Ց Ի Ւ Ն

Թանձր խաւարը պատել էր երկին,  
Արար աշխարհը մռայլ էր, մթին.  
Ամեն տեղ թախիծ, տաղտուկ ամեն բան,  
Կեանքը դառնագին, ծանը էր, դաժան:

Եւ հորիզոնի մշուշն ու խաւար  
Յանկարծ ճեղքւեցին, և լոյսը պայծառ՝  
Ուրախ շողալով՝ ողջունեց երկրին,  
Իր ճաճանչները տարածեց չորս դին:

Զքացաւ թախիծ, տաղտկութիւնն անցաւ—  
Աշխարհը լցւեց հրճւանքով անբաւ...  
Թնդացին սրտերն, տրոփացին ուժգին,  
Իրար բերկրանքով աւետիս տւին...



Կ Ո Յ Ա

Քայեացքդ չեղ, գէմքդ անմեղ,  
 Ինքդ անբիծ, պատկերդ գեղ.  
 Համեստ ճեմում ես դու հանդարտ,  
 Անուշ ժալտում, իբրև ալ-վարդ:

Հեռու երկըի ստոր սէրից,  
 Հեռու մարդու չար խոհերից,  
 Մատաղ կրծքով կեանք ես շնչում,  
 Սուրբ կուսութեան բուրմունք սփռում:

Օ, անարատ կոյս երկնալին,  
 Լկտի կեանքի չես դու բաժին!..  
 Դու բստեղծել ես պաշտւելու համար,  
 Լոկ հնչեցնելու երգչի քնար.  
 Աշխարհ ես եկել երկըրպագւելու  
 Գծուծ կրքերը ոտնատակ տալու:

Ս Ե Ւ Ա Ն Ի Վ Ե Ր Ա Ց

Ա՛! լողա հա, գէ լողա,  
 Առաջ գնա, իմ նաւակի  
 Արև, արև, շողշողա  
 Արծաթ ջրում սառնորակ!

Թիակները շարժեցէք  
 Վճիտ ջրի երեսին,  
 Մարգարտի պէս փայլեցէք  
 Բիւրեղները ծովալին!

Շուրջս կապոյտ սէգ լեռներ՝  
 Հորիզոնում լուռ շարւած,  
 Վերև անհուն ջինջ եթեր՝  
 Շքեղ լիճն ընդգրկած:

Եւ նաւակս օրօրւում,  
Երերւում է հանդարտիկ.  
Առագաստը ծածանւում,  
Եւ փչում է մեղմ հովիկ:

Այ, զեփիւռիկ, անուշակ,  
Թռիր լեռներն կապուտակ,  
Տար իմ երգը դու հեռուն,  
Տար իմ տխուր դիցուհուն!

Ա՛ լողա հա, դէ լողա,  
Առաջ գնա, իմ նաւակ!  
Արև, արև, շողզողա  
Արձաթ ջրում սառնորակ!

Սևան, 1894 թ. յուն. 17.



Գ Ա Ղ Թ Ն Ի Ք

1001  
6001

Մըրկածուփ կեանքի ծովից  
Ես դալկացած և ուժասպառ՝  
Գալիս եմ քո գերկը նորից,  
Օ, մայրենի Գողթան աշխարհ!

Սիրում եմ ես հանգիստ առնել  
Քո խանդավառ գգւող գրկում,  
Սիրում եմ ես հանգիստ ննջել,  
Ծաղկափթիթ քո դաշտերում:

Սիրում եմ քուրուռն սիրով  
Քո գեղաբոյս ալգիք կանաչ,  
Քո սիրախորժ զեփիւռը հով,  
Սառ ջրերդ քաղցրակարկաչ:

Երբ երկնալին երգիչներըդ  
Անուշաձայն դալլայլիկով  
Թաղացնում են սէգ լեռներըդ,  
Սիրտս լցնում հրճւանքներով.

Յիշում եմ ես այն ժամանակ  
Քնարները քո ոսկելար,  
Որ հնչելով մեղմ, անուշակ,  
Դիւթում էին արար աշխարհ:

Յիշում եմ քո փառաբանւած  
Պառնասի հէգ զաւակներին,  
Որ հայրենի սիրով լառւած՝  
Գովում էին հայ քաջերին:

Սակալն ալսօր, սգւոր Գողթան,  
Դու զըկւած ես երգիչներից!..  
Եւ չես լսում կախարդական  
Նոցա երգը անուշալից...

Վ. Ագուլս, 1894 յուն. 19-ին.

Հ Ա Մ Ի Ս Է Ւ

Լսելիքդ ես չեմ շուիլ  
Երբէք անուշ երգերով.  
Խաղաղ հոգիդ ես չեմ յուզիլ  
Քաղցըրաձայն քընարով:

Դու չես լսիլ իմ բերանից  
Սիրեւ իսուքը բընաւին,  
Սիրու նշոյլ դու ինձանից  
Մի ըսպասիր տակաւին:

Կոլը բախտն ու կեանքի հոսանք  
Կաշկանդել են, ամուր փականք  
Դրեւ լեզւիս, խոր լռութեան  
Դրոշեւ կնիք լաւէրժական:

Բայց երբ անցնես զիրմիս մօտով,  
Լոկ տապանս կ'ասէ այնժամ.  
«Նա շնչում էր միայն քեզնով,  
Փոշիացաւ նա քո անւան!»



Ք Ե Զ

**Ս**իրում էի ես գարունը պճնւած  
Կանաչ դաշտերը ծաղկով փթթած.  
Ըզմալլում էի բիւրեղ ջըրերով  
Եւ ըսքանչանում սոխակի երգով:

Ըզմալլում էի, նայելով երկին,  
Ուր ծիծաղադէմ լողում էր լուսին,  
Ուր ուրախ-զըւարթ աստղերը պայծառ  
Շողողում էին, փալլում անբարբառ...

Հիանում էի, անվերջ հիանում,  
Շքեղ բնութիւնն գովում ու երգում.  
Իսկ այժմ?.. հեռու հրաշալի աշխարհ,  
Գեղ բընութիւնդ ոչինչ ինձ համար!

Ալժմ իմ միակ գարունն ու ծաղիկ  
Միմիայն դու ես, աննման աղջիկ!  
Քո հրեշտակալին տեսքով է շնչում  
Հրավառ կուրծքս, հրճում, բարախում...

Գիտեմ, մեր միջին անհուն վիշեր կան,  
Բայց մեր սրտերը կ'ըլնեն անբաժան.  
Թող մեզ անջատող անդունդի եղրից  
Գոնէ նայեմ քեզ, հիանամ հեռից!..

ՈՉ ԱՌԱՄՄԻՊՀ, ՈՉ ՓՈԹՈՐԻԿ!

**Օ**, սև ամպեր, մռայլ ամպեր,  
Քանի ծածկէք կապուտ երկին,  
ծածկէք լուսնի արծաթ շողքեր,  
Խաւարեցնէք ծով ու գետին!

Հէնց երկնալին կանթեղը վառ՝  
Ազատւելով կաշկանդանքից՝  
Ուզում է քիչ տեսնել աշխարհ,  
Ազատ շնչել, ժպտալ վերից.

Իսկոյն մշուշ, խաւար ամպեր  
Ամեն կողմից նորան պատում,  
Սեացնում են դաշտ ու լեռներ,  
Թախիծ, ձանձրոյթ չորս դին սփռում:

Թողեց սէլը սիրահարը,  
Մնաց տխուր, յուսահատ.  
Զգեց պօէտ իր քընարը,  
Արցունք թափեց յորդառատ...

Եւ մռալապատ երկնի խորքից,  
Կուտակ-կուտակ ամպի միջից,  
Լսւեց նըւազ ու դալկացած  
Լուսնի ձախը, յուսով լցւած:

«Ե՞», հետ լուսին դառն օրեր  
Իր սև կեանքում շատ է տեսել.  
Նըան շատ են մշուշ, ամպեր  
Կաշկանդել ու խաւարացրել!

Բայց մինչև այժմ նա հաստատուն,  
Նա անվեհեր՝ կալ երկնքում.  
Չեն չըքացնիլ նորան մըրիկ,  
Ոչ աղջամուղ, ոչ փոթոքիկ!..

Առ քնարդ, մի լար, պօէտ,  
Ոսկելարից թափ տուր փոշին!—  
Մօտ է օրը երանաւէտ,  
Երբ պիտ նորից շողալ լուսին:

Կ'անհետանան մշուշ, խաւար,

Լուսնի կապանք կը խորտակւի.  
Երկինքն էլ զինջ, անդնըր, պալծառ,  
Վառ աստղերով կը զարդարւի»:

**Յիշիր** ժամն այն երջանիկ,  
Երբ իմ գիրկը նետւեցիր,  
Եւ հրճւելով, ինչպէս մանկիկ,  
Ալրւող կրծքիս սեղմւեցիր!

Այն ժամանակ ամբողջ աշխարհք  
Միայն ինձ էր պատկանում.  
Երջանկութիւն, կեանք ու բերկրանք  
Ամփոփւած էր իմ գրկում:

Եւ լուսինը գեղածիծաղ՝  
Շողզողալով երկնքում,  
Զինջ եթերից ուրախ-ուրախ  
Մեր սէրն էր օրչներգում:


\* \*

Այն ժամանակ յաւէրժական  
Եւ բուռն սէր խոստացար,  
Դու ուխտեցիր մինչ գերեզման  
Ապրել միայն ինձ համար:

Մինչեւ ալսօր ալդ խոստումին  
Լուռ վկալ են աստղերը,  
Անմահ վկալ են ալդ ուխտին  
Լուսնի պալծառ շողերը:

Բայց խոստումը նըւիրական  
Ոտիդ տակը ձգեցիր—  
Ալրւող սիրտս գու յաւիտեան  
Խորտակեցիր, փշրեցիր!

Ես այսուհետ լոկ կը սըգամ,  
Իսկ գու անփոլթ կը խնդաս.  
Ես իմ կորցլած սէրը կ'ողբամ,  
Իսկ գու անհոգ կը ժպտաս...



Երգիդ մէջ կար—և հառաջանք,  
Եւ ցնծութիւն, և ըսփոփանք:

Ամեն կողմից ազգըդ բոլոր  
Ժողովւել է շուրջըդ այսօր.  
Նա ծունկ չոքած քո առաջին՝  
Փառք է տալիս քո կոթողին:

Այսօր ազգըդ ծափ է զարնում,  
Ծաղիկներով քեզ պսակում.  
Այս ովսաննան, այս կեցցէներ  
Դեռ պիտ' հնչեն երկար դարեր:

Փառք ու պատիւ, ով ծերունի  
Անմահ պօէտ Վլրաստանի!  
Առ դափնիքը մշտագալար,  
Դարձեալ զարնիր քո ոսկելար!...

ՄԵՐ ԳՐԱՅԻ ԵՐԳԻՉ ԻՇԱ ԲԱՑՈՒԷԼ  
ԵՐԻՍՏՈՎԻԿԻՆ\*)

**Տ**ըկար երգով քեզ եմ գովում,  
Քեզ եմ գովում, փառաբանում,  
Օ, պանծալի, դափնեպսակ  
Դու բանաստեղծ մեծահոչակ!

Առար ձեռքըդ ոսկէ քընար,  
Վեհ Պառնասը դու վերացար,  
Եւ զարնեցիր դիւթիչ լարին,  
Երգ ձօնեցիր քո աշխարհին:

Երգիդ միջին ողջ Վլրաստան  
Գտաւ սրտին անկեղծ թարգման.

\*) Յօբելեանի առթիւ, 1895 թ.ի հոկտեմ-  
բերի 22-ին.

\* \*

**Պու** ուզում ես, որ հնչեցնեմ  
 Սըտիս քնքոյշ լարերը—  
 Որ լարերից երգեր հիւսեմ  
 Ու երգեմ այդ աչերը:

Բայց ես, աւաղ, էլ սիրո չ'ունեմ—  
 Նա վաղուց է խորտակւած.  
 Գեղ աչերըդ ինչպէս երգեմ  
Ես քընարով ջախջախւած?



չ թ ե թ ծ լ Կ

(Լեռմօնտովից)

**Գիշերւայ** կիսին երկնակամարում  
 Թուչում էր հրեշտակ և մեղմիկ երգում.  
 Եւ աստղեր, և ամպ, և պայծառ լուսին,  
 Ունկնդիր էին նորա սուրբ երգին:

Օրհներգումէր նա դըրախտում ապրող  
 Սուրբ ոգիների երանելութիւն,  
 Նա էր Աստղծուն Ամենակարող  
 Յստակ, սրտաբուղիս գովեստ էր ձօնում:

Մատաղ հոգի էր նա գըկած տանում  
 Աշխարհի վշտի, արցունքի համար,  
 Եւ նորա երգը այդ մատաղ հոգում  
 Մնաց կենդանի, սակայն անբարբառ:

Եւ աշխարհումս երկար տառապեց՝  
Լի հըրաշալի ցանկութեամբ՝ հոգին.  
Եւ երկնի երգին ըլ փոխարինեց  
Նորան աշխարհի երգը տիրագին:



Փ ե ր ի  
I

Կանաչազարդ խիտ անտառի թաւուտներում,  
Ուր առւակն է քաղցրակարկաչ միշտ խոխոջում,  
Ուր անչամար և գոյնզգոյն ծաղկանց միջին  
Միշտ խաղում է անուշաբոլը մեզմիկ քամին,  
Ուր երկնալին երգիչներն են միշտ գեղգեղում —  
Այնտեղ էր գեղ Փերին ապրում, կեանք վայելում:  
Վարդերի մէջ նա ծաղիկ էր մի աննման,  
Հսքանչելի նա տիպար էր գեղեցկութեան:  
Թուխ մազերը՝ տարածւելով ճերմակ վգին՝  
Փռւել էին գեղահրաշ հարուստ կրծքին,  
Ուր երկու հատ գիւթիչ շամամ ձիւնաթաթախ՝  
Ժպտում էին և համբուրում ուրախ-ուրախ:

## III

Որն է արդեօք մահկանացուն, որ անվրդով  
Կարողանալ նայել Փերուն, որ պաղ սրտով  
Կարողանալ նայել նորա սև աչերին,  
Նայել նորա ալ թշերի փոսիկներին,  
Որոնք մարդուս շլացնում են, խելքից հանում  
Եւ հրաշալի բընութիւնը նսեմացնում?  
Որն է հըզօր այն քընարը քաղցըրգին,  
Որ կարենալ փառաքանել գեղ Փերիին?  
Միթէ մարդս կարող է իր տկար լեզով  
Պատմել նորա չքնաղութիւն, գովեստն ու գով?

## III

Դարձիր, որսորդ, մի մօտենար այն թաւուտին!  
Այնտեղ է նա, հիասքանչ անմաշ Փերին.—  
Հրեշտակալին նա իր տեսքով քեզ կը դիւթի  
Եւ քո ջահնէլ կնոջ գըկից քեզ կը խիլի:  
Հոգուդ քնքուց, նուրբ լորերին կը տիրանալ,  
Կը մթնացնի ողջ երկինքը քո տան վերայ:  
Բայց եղջերուն արագավազ այնտեղ փախաւ,  
Խիտ մացառի, թաւուտի մէջ անչետացաւ:

## IV

Եւ որսորդը՝ ոլորելով թաւ քեղերը՝  
Ճղեց կարող բազուկներով մացառները, և այս ով  
Հասաւ երկրիս երանաւէտ այն տեղերին,  
Որտեղ նա դեռ ոտք չէր գրել ամենևին:  
Եւ եղեմը յանկարծ բացւեց նորա առաջ—  
Փերին թիկնում՝ մերկ ննջել էր խոտում կանաչ...  
Հով զեփիւռը մեղմ շոլում էր թշերը-վարդ՝  
Ու ծածանում գանգուրները հանգիստ, հանդարտ.  
Իսկ առւակը անուշ-անուշ կարկաջելով  
Քաղցըրացնում էր խաղաղ քունը իր օրօրով:  
Երազ է այս, թէ մի տեսիլ խոր անտառում?  
Թէ որսորդի աչքերն են նորան խաթում?..

## V

Եւ որսորդը սրտատըրովի կանգնեց ապշաճ՝  
Ցնորւածի պէս նայեց Փերուն ըսքանչացած.  
Լոիկ, կամաց նա մօտեցաւ գեղեցկուհուն,  
Մեղմ համբուրով վրդովեց նրա անուշիկ քուն...  
Ս.հա հանդարտ շարժւեցին նրա ունքեր կամար,  
Նորանց տակից պսպղացին երկու գոհար—

Զարթնեց Փերին, զարթնեց աղջիկն անտառալին  
Ու ժպտերես նայեց ջահէլ մեր որսորդին...  
«Երկրի հրեշտակ, չքնաղատես դու հողեղէն!  
Ես, անտառի սիրուն Փերիս, վաղուց արդէն  
Սրտատըրով ըսպասում եմ քեզ, իմ եարին,  
Որ գայ սեղմի ինձ բարախող իր ջերմ կրծքին,  
Որ գգւելով՝ քաղի թշիս վարդը կարմիր,  
Հանգիստ առնի գրկի միջին իմ սիրալիր...  
Արի, նստենք տերևախիտ ծառի տակին,  
Քաղցր-քաղցր զըուց անենք ջրի ափին!»

## ¶¶

Արդէն կարմիր արեգակը մալը էր մտել  
Եւ երկնաբերձ լեռան ետև անհետացել.  
Արդէն նախշուն, ծլվլացող թռչունները  
Երդը թողել՝ քաշւել էին մութ բները.  
Սև քողի տակ մրափում էր ողջ բնութիւն,  
Եւ տիրում էր մեռելալին խոր լուսթիւն.  
Առւակն էր միայն հոսում խոտերի մէջ,  
Քնած երկրին օրօր ասում, օրօր անվերջ:  
Եւ Փերիի մոալլապատ բուրաստանից  
Յանկարծ հնչեց մի կանացի ձայն հեշտալից—  
Եւ ծառերը՝ խորհրդաւոր տատանւեցին,  
Մէկզմէկու ինչոր գաղտնիք շշնջացին...

## ¶¶¶

Ով է լալիս ու հեկեկում կէս գիշերին,  
Դառըն ողբով որոտացնում երկինք, գետին?  
Ով է մոռալ այն լեռները դղրդացնում,  
Հառաջանքով խաղաղ երկրի քունը կտրում?—  
Այդ Միհրանի կինն է սգում բախտը թշւառ  
Եւ լուսահատ փետում մազերն, իբր խելագար:  
Երկու օր է, որ էրիկը տուն չի եկել—  
Որոնել են դաշտ ու լեռներ, բայց չեն գտել:  
Արդեօք շեղւել, մոլորւել է ճանապարհից?  
Թէ լնկել է մուշ անդունդը բարձր ժայռից?  
Թէ անտառի ոգիները նորան աարան?  
Թէ գաղաններն պատառ-պատառ արին նորան?..  
Ոչ, մեռած չէ որսորդ Միհրան, թշւառ դու կին!  
Շուտով կը գայ, տուն կը գառնայ քո ամուսին.  
Շուտով կը գայ, բայց իր սիրտը վաճառած...  
Նա տուն կը գայ ատելութեամբ քո դէմ զինւած.  
Կը կշտամբի, քեզ կը տանջի անգիտաբար  
Եւ կը փախչի նորից դէպի նա թաւ անտառ!  
Քո էրիկը անտառալին չար Փերիից  
Հմայւած է, նա դիւթւած է, զրկւած խելքից... \*)

\*) Հայ ժողովուրդը հաւատում է երևակայական հիւրի փերիներին, որոնք բնակում են կուսական ան-

## VIII

Հայր, ազգական, մալը ու քոյրեր՝ շուրջ բոլորած՝  
Ճեղ Միհրանին լուռ նայում են, տխուր կանգնած.  
Նա կապկապւած պարաններով բագի ծառից,  
Մանչում է, իբրև գաղան ահուելից:  
Իբր Արտաւազդ, նա կատաղած ճիդ է թափում  
Կապանքները կտրել, փախչել. ջանք է անում  
Նա հաստ ծառը հանել հողից, դէն շպրտել.  
Նա ճգնում է կաշկանդանքից շուտ ազատւել,  
Որ տեղացնի կայծակները կատաղութեան,  
Ոտնատակ տալ կաշկանդողին, սպանի նորան,  
Փախչի տնից, թոշի, հասնի Փերիի մօտ,  
Նորա գըկում հանդիստ առնի, առնի կարօտ...

տառների խորքերում: Փերիները երկու տեսակ են լինում բարի և չար: Զար փերիները իրանց զեղեցկութեամբ հմայում, դիւժում են պսակւած երիտասարդներին, տանում են նրանց անտառի խորքը, ծառայեցնում նրանց իրանց կրելն, իսկ յետոյ աներեսութանում: Խելակորոյս երիտասարդը, որոնելով իր սիրոյ առարկան, երկար թափառում է անտառում և վերջը դրկում կեանքից:

Հեղ.

## IX

Տատանւեցաւ ծառը յանկարծ... կապանքները  
կտրտւեցան...  
Իրար անցան մալը ու քոյրեր, հայր, ազգական...  
«Ուր ես վազում?.. ուր ես փախչում! Միհրան,  
դարձիր!  
Խեղճ կնոջդ, ծնողներիդ գու խնալիր!..»  
Բայց Միհրանը կայծակի պէս թռաւ, փախաւ,  
Հեռնեւ, հեռնեւ, խոր անտառում անհետացաւ:

## X

Տաղտկալի էր արդէն Միհրան իր Փերիին.  
Ել չէր ուզում նորան տեսնել գեղեցկուհին:  
Շատերին էր Փերին գիւթել ու կախարդել,  
Շատերին էր իր սիրովը հալել-մաշել:  
Հմալիչ է, մի տրփանք է նա մարմնացած,  
Աստւածուհի է հեշտանքի, աւիւն ձուլւած.  
Նա գիւթում է մատաղ սիրտը, հրավառում,  
Նորա քնքոյշ, նուրբ լարերին տիրապետում.  
Եւ քամելով կըքի բաժակ մինչեւ յատակ՝  
Առնում է նա մահկանացւից սրտի փափագ,  
Ապա թողնում երկրսպագւին, ձգում նորան  
Ու տապալում ծովը վշտի և դառնութեան:

Դեռ շատերին նա կը դիւժի, դեռ շատ սրտեր  
կը հըմայի, ջահիլ-ջիւան շատ տղաներ  
Անտառային չար Փերիին զո՛չ կը գնան,  
Դեռ շատ հարսներ կ'այրիանան, կ'անբախտանան!..

## XXI

Վաղեց Միհրան, կարօտալից հասաւ անտառ,  
Նտապ դիմեց դէալ բուրաստան նա շնչասպառ—  
Աչա Փերին! նա այնտեղ է... այն ժայռի տակ,  
Որի բարձրից հոսում էր ցած ջուրը լստակ,  
Լողանում է բիւրեղներում նա սառնորակ...  
Որպէս Վանայ ծովակի մէջ չքնաղ Աստղիկ՝  
Նա դիւժիչ էր ջրի միջին ու գեղեցիկ:  
«Մի մօտենար, կանգնիր, Միհրան!— ձայնեց Փե-  
րին,—

Մի յանդգնիր... ինձ մոռացիր դու բնաւին!»

Ասաց Փերին ու չքացաւ,  
Ընկնող աստղի նման թռաւ...  
Նայեց Միհրան, նայեց երկար,  
Սակայն Փերին չը կար, չը կար...

## XXII

Աչա, այնտեղ սարալանջով քայլամոլոր  
Բարձրանում է ցուալը ձեռին՝ մի ալեոր.  
Նա մերթ կանգնում, մերթ լալիս է, հեկեկում,

Մերթ յուսահատ ու ողբաձայն բարձր կանչում.  
«Ուր ես, Միհրան? անդին զաւակ, ուր գնացիր?..  
Ինչու վերջին իմ օրերը դու սևացրիր?»  
Երկար օրեր որոնել է խեղճ ծերունին  
Ծերութեանը միակ նեցուկ իր զաւակին,  
Բայդ ոչ դաշտում, ոչ անտառի թաւուտներում,  
Ոչ լեռներում նորա որդին չէր երևում:  
Ահա յանկարծ բարձր լեռան լանջերի տակ  
Կրկուցին անգղները չարագուշակ:  
Հառաջելսվ առաջ անցաւ ծերը թշւառ,  
Եկաւ, հասաւ գահաւանդի մօտ շնչասպառ:  
Նորա առաջ բացւեց մթին մի անդունդ,  
Որի վերայ գիշատիչներն գունդագունդ՝  
Ճախրում էին, բարձր գոչում,  
Ագահութեամբ վիհը իջնում,  
Ուր փուած էր մի ալլանդակ,  
Կացահարւած, նեխւած դիակ...»



\* \*

**Ծ**ննդեան տօնին փոքրիկ մանուկին  
Տըւին մի սիրուն ընծալ թանկագին.  
Բուռն հրճւանքով անհոգ երեխան  
Խնդաց, փալփալեց իր չքնաղ ընծան:

Իր նըւէրի հետ նա երկար խաղաց,  
Խաղաց ու խաղաց—վերջը տաղտկացած՝  
Շալրտեց հեռու, նորան ջախջախեց,  
Սպաս սառնասիրտ՝ ժպտաց ու շրջւեց...

Ահա այնպէս էլ, ես քեզ զոհ բերի  
Բոնկող սիրտս, աննման փերի!  
Բայց դու իմ սիրտը խաղալիկ դարձրիր,  
Փշրեցիր նորան, անհոգ շրջւեցիր...

Ապար այս և ուղարկեց  
Ապար այս և ուղարկեց  
Ենթ յառա շոր ով պահու  
Խոր պատ ով ով ուղարկեց

Յառա պատ ով ով պատ  
Յառա պատ ով ով պատ  
Ենթ յառա շոր ով պահու  
Խոր պատ ով ով ուղարկեց

### Լ Ե Ւ Ո Ն Ի Կ Ի Ն

**Ո**ղոլն քեզ, օ դու նորածին,  
Անմեղ մանկիկ հըեշտակալին,  
Անբիծ հիւլէ դու մարդկութեան,  
Հիւլէ խասակ, անապական!

Սիրում եմ ես անզուսպ սիրով  
Ալդ գեղանի անհոգ պատկեր,  
Սիրում եմ ես բուռն խանդով  
Ալդ քո անփոլիթ, սիրուն աչեր:

Գեռ քանի որ այս աշխարհում  
Դու չես տեսել ցաւ ու հոգսեր,  
Ուրախ ժպտա մօրդ գըկում,  
Խնդաց, երգիր կայտառ երգեր!

Հիւթապաշտ և լկոի դարձս,  
Զելխութիւնով լի աշխարհըս,  
Կեանքը իր դարշ կըքով գծուծ  
Դեռ հեռու են քո սուրբ հոգուց:

Զ Ա Տ Ւ Կ

Աչա եկաւ պալծառ գարուն,  
Դաշտը զուգւեց գոյն-գոյն ծաղկով.  
Եկան օրեր, օրեր փայլուն,  
Օդը լցւեց քաղցր երգով:

Մարդիկ, թռչուն, միջատ, սողուն  
Ուրախ-ուրախ դուրս թափւեցան  
Ընդունելու հիւրին սիրուն,  
Ընդունելու շքեղ դարնան:

Զրերն անգամ՝ շառաչելով  
Սառցի կապանք խորտակեցին,  
Անուշաձալն խոխոջելով  
Հով զեփիւռին ողջունեցին:

Նիւթապաշտ և լկոի դարձս,  
Զելխութիւնով լի աշխարհըս,  
Կեանքը իր դարշ կըքով գծուծ  
Դեռ հեռու են քո սուրբ հոգուց:

Բայց երբ շնչես կեանքի նեխւած  
Եւ թռչունալից օդը պղծւած,  
Ալնժամ ծանր, դաժան կ'ըլնի  
Քեզ աշխարհս ու զաղըելի...

Ախ, ինչու չեմ ես էլ մանուկ,  
Որ մոռանամ դարս տաղտուկ,  
Որ բեկրեկւած սիրոս ցնծար,  
Ուրախ հրճւէր հոգիս տըկար!

1894 թ. մարտի 16-ին.



Չանցան գարնան օրեր քաղցրիկ,  
Երկնից լսեց մեծ աւետիք.  
«Ողջոյն երկրին, ողջոյն մարդոց,  
Քրիստոս յարեաւ ի մեռելոց»!

Հայոց առաջնաժողովը առաջ առ  
Հայոց մայրաքար առաջոր պահան  
Տաղակի պահո պահո մարտ  
Հարցի պահո շահո պահո

Առաջ առաջնաժողովը պահո պահո  
Տաղակի պահո պահո մայրաքար  
Առաջ մայրաքար առաջոր  
Տաղակի պահո պահո պահո

Հայոց առաջնաժողովը պահո պահո  
Տաղակի պահո պահո մայրաքար  
Հայոց մայրաքար առաջոր  
Տաղակի պահո պահո պահո

Հայոց առաջնաժողովը պահո  
Խայր բան ուժություն առաջ  
Առաջ պահո պահո պահո  
Խայր նոյն պահո պահո

Հայոց առաջնաժողովը պահո  
Խայրական առաջնաժողովը  
Առաջ նոյն պահո պահո  
Խայր նոյն պահո պահո

### ԵՐԻ ՄՈՒ ԳՈՒԲԻՇՈՒՑՆԵՐ

**Փալա ունեմ նազանի,**  
**Զեմ տալ հազար թումանի.**  
**Կը պաշպէմ իմ բալիս,**  
**Կը գուրգուրեմ գառնուկիս:**

Դէ մեծացիր, իմ քաղցրիկ,  
Զանիս հասիր, անուշիկ!  
Քո հօր քանդւած օջախին  
Նեցուկ դարձիր, իմ անգին!

Դու ես լոյսը իմ միակ,  
Հանգուցեալիս լիշտակ.  
Պիտի սրբես իմ աչքից  
Սրտասուքըս լորդալից...

Դէ, թրվոա, թրվոա,  
Խնդա, որդիս, խաղ արա!  
Կը մեծանաս, կը վառես,  
Հանգած ճրագս, իմ բալէս!

Տէր, նախշունիս Դու պահիր,  
Զօրացըրու, խընամիր!  
Քո պարգևեած իմ բերքը  
Թող դարմանի իմ վերքը?

Բալա ունեմ նազանի,  
Չեմ տայ հազար թումանի.  
Կը պաշպէմ իմ բալիս,  
Կը փալիփալեմ գառնուկիս:



Մ Ա Ր Կ Ո Ր Ի Ց Ւ Ն

Պէ խնդա, դէ ժպտա, իմ քաղցրիկ,  
Խաղ արա, թրվոա, անուշիկ!  
Պէ երգիր, Մարգարիտ, դէ հըճւիր,—  
Այ այգպէս, իմ գառնուկ, թոչկոտիր!

Քանի որ չի անցել, իմ սիրուն,  
Քո կեանքի ծաղկաւէտ այս գարուն,  
Դու անհոգ միշտ երգիր ինձ համար,  
Ըսփոփիր իմ սիրտը վշտահար!

Դեռ մի լար, օ մի լար, իմ հոգեակ!  
Զի հասել դեռ լալուդ ժամանակ.  
Դեռ քանի անյալտ է կեանքը քեզ,  
Միշտ ուրախ դու ժպտա վարդի պէս!

Քեզ հոգ չէ, թէ քո մեծ քոյլերը  
Ողբում են իրանց սև օրերը.  
Նորանք թող հառաչեն, հեկեկան,  
Սակայն դու դեռ խնդա, սիրեկան!

Թէպէտ դու ծնւեցիր, իմ անգին,  
Այս դառըն, արիւնոտ ժամերին,  
Բայց վիշտը քո սրտին կուսական  
Դեռ օտար, օտար է, աննըման!

Դէ ժպտա, թրվռա, իմ փոքրիկ, —  
Այ ալգակէս միշտ խնդա, անմեղիկ!  
Երանի քո սրտին, նազանի,  
Երանի! Երանի! Երանի!

1895 թ. հոկտ. 7-ին.



Ք Ն Ե Ր Գ

Նւէր Աղելայիդային

Հովիւր նստած ժայռի կատարին,  
Սըթուն աչքերը յառելով չորս դին,  
Սընդահարում էր անուշ ու քաղցրիկ  
Եւ հանգիստ տալիս դառներին փոքրիկ:

Սիրուն գառները՝ խոտը վայելած՝  
Կանաչի միջին փափուկ նստոտած՝  
Նազով ու մանրիկ որոճ են անում,  
Աչերը փակած հանգիստ վայելում:

Ես էլ, եմ գառնուկ, անկողնիկիդ քով  
Սըթուն կը նստեմ քաղցր տաղերով,  
Քեզ օրօր կանեմ, կերպեմ անուշակ,  
Մինչեւ որ քնես, քնե՞ս, իմ հոգեակ!

Լալ-լալ-լալ-լալ,  
իմ բալաս,  
Քնիր, որ շուտ մեծանաս.  
Նանի, նանի, նազանի,  
Անուշ քնիր, աղաւնի!  
Օրօր, օրօր! զօրանաս!  
Օրէցօր դու մեծանաս!..

1898 թ. սեպտ, 13-ին.



Երգու ճակար ոչ ժայռու պարա  
Համաժամանի ըստ ժայռու մազու  
Կայունութեան այս ժայռու մազու  
Վայու այս ժայռու մազու այս ժայռու

ի թ ի դ է Ա լ ի ն

\* \*

**Ե**րգւած երգերով, չքնաղ դիցուհի,  
Ես քեզ եմ երգում! Ես քեզ չեմ շոյի  
Ոչ մեծահնջիւն, քաղցր բառերով,  
Ոչ պօէտական անուշ լանգերով:  
Թոյլ երգիս վերալ գուցէ դու ժապտաս,  
Սրհամարանքով շուռ գաս ու խնդաս.  
Հոգ չէ, ծիծաղիր!—քո արհամարանք  
Կը քաղցըրացնի իմ սիրու տտնջանք!

\* \*

Երբոր բացւել էր գարունը պայծառ,  
Գոլն-գոլն ծաղիկով պճընւել անտառ,—  
Քաղցրակարկաչ առւակի ափին  
Մի անուշաբոյր մանուշակ տեսալ.

Իսկոյն պոկեցի, իմ ալրւած սրտին  
Նորան սեղմեցի, բայց սթավիւեցայ—  
Տեսալ, որ դու չես... այլ մի տատասկոտ,  
Դեղին ու վալրի ծաղիկ էր անհոտ:

\* \*

Հիանում էի պալծառ երկնքով,  
Երբոր լուսինը՝ ամպը ճեղքելով՝  
Լողում էր հանդարտ ու գեղածիծաղ.  
Երբ կարմիր արև ծովումը խաղաղ  
Շողշողացնում էր իր ճաճանչները,  
Համբուրում ջրի պաղ բիւրեղները.  
Բայց նսեմացըիր քո շուք ու փայլով  
Շքեղ բընութեան հրաշալիքները!

\* \*

Երբ շղթալակապ, յոգնած, ուժասպառ՝  
Ես հեծում էի բանտումը խաւար,  
Յանկարծ սոխակի անուշ ձայն հնչեց.  
Վանդակիս առաջ սոխակը երգեց  
Ու նստեց ծառին: Ճգնեցի փշրել,  
Խորտակել շղթաս, սոխակիս հասնել՝  
Բայց սթավիւեցայ—տեսալ, որ դու չես...  
Անգութ մի ըստ էր, որ խաբեց ալդպէս:

\* \*

Երգւած ու հին են այս իմ երգերը,  
Բայց թարմ ու նոր է իմ սրտի սէրը.  
Նա կը մնալ թարմ, մինչեւ քեզ գտնեմ.  
Իսկ երբ քեզ գտնեմ ու սրտիդ տիրեմ,  
Օ, այնժամ պիտի թառամի, աւաղ,  
Ճակատդ զուգող շուշանը չքնաղ!  
Այնժամ և սէրս պիտի հնանալ,  
Մարի ու հանգչի, անհետ չքանայ:

\* \*

Ոչ! Սրտիս համար դու միշտ կը մնաս  
Ցնորքի Փերի ու յաւերժահարս.  
Կը մնաս, իբրև վշապատ դու վարդ,  
Անմերձենալի գեղեցկութեան զարդ,  
Որպէս զի սէրս չը մարի երբէք,  
Որպէս զի անվերջ տանջւեմ վշտաբեկ:  
Օ, քեզ ուզում եմ յաւիտեան սիրել,  
Յաւիտեան վինտրել, վինտրել ու մեռնել!..

\* \*

Երնէկ, Պազարոս յանկարծ դառնալի,  
Սառ գերեզմանից ես վեր կենալի,

Որ քեզ սեղմէի կըծքիս մամըռոտ,  
Գոնէ մի վալրկեան առնէի կարօտ!  
Բայց սարսափում եմ... Ոչ! Կը ցանկալի,  
Տապանիս միջից դարձեալ կ'ուզէի,  
Որ դու վարդերի, մեխակների մէջ  
Անթառամ ծաղիկ մնալիր անվերջ...

Եսու հոգածու մզժանաբախու  
— պատուին ունեց անձրսեալ առալ  
ինչու մին ոչ ունէ զարա մ  
անձուի մեջուու կու բանց ու

Դապատ պայտ պարախու ուն  
ին առ ինձու Շ եռածու զար  
ունձու զար և նախորդու  
այլամա նաև ունձու եղած ու

ՄԵՐ ԹԱՑՔՈՒՆԻ ՎԵԺԵՐՈՒՆ  
ՏԻԿ. ՍԱԹԻՆԻԿ ԶՄԵԿԵԱՆԻՆ

Յօթելեանի առթիւ

**Թ**անձր մշուշ էր պատել հալ բեմին,  
Մոալլ խաւարը տարածել չորս դին.  
Մելպօմենէի սրբազան տաճար  
Հայուհու առաջ փակւած էր իսպառ:

Բայց ահա յանկարծ դու երևացիր,  
Կանթեղի նման պալծառ շողացիր,  
Եւ հալածելով գարաւոր խաւար՝  
Քոլըերիդ առաջ բացիր սուրբ տաճար:

Նախապաշտմունքն ոտնատակ տւար,  
Ազատ, համարձակ բեմը բարձրացար—  
Եւ քաղցր հնչեց քո ոսկէ բերնով  
Մեր չքնաղ սեռի առաջին թոթով:

Հայ ժողովուրդը՝ զուրջդ հաւաքւած՝  
Ալսօր հրճում է՝ քեզանով դիւթւած,  
Երկըրպագում է բարձր շնորհքիդ  
Ու ջերմ կեցցէներ ձօնում անունիդ:

Ոլս կեցցէները, բուռն ովսաննան՝  
Անունիդ նման՝ անմահ կը մնան.  
Մեր բեմի Մալրիկ! դեռ դարեր երկար  
Քո դափնիները կը մնան դալար!

Երեսունեհինգ-ամեայ քո տօնին  
Մատուցած բոլոր պարզե ու ձօնին  
Թող և միանայ այս իմ դաշնակը,  
Տկար քընարիս համեստ նըւագը!

1899 թ. յունաշրի 14-ին.

Դ Ա Ի Զ Ա Յ Ի Ն

(Նադոօնից)

Պոկիր ճակատից պլսակդ դափնեալ,  
Պոկիր, շպրտիր նորան ոտիդ Փակ—  
Քո դէմքին միալն կը սազի փշեալ,  
Արիւնաթաթախ ու դաժան պլսակ...

Օ, չարաճընի գեղեցկուհիներ!  
Դուք հմայեցիք իմ հոգու լարեր,  
Տըկար սրտիս հետ խաղացիք երկար  
Ու վերջը նորան փշեցիք խպառ։

Մընջող վէրքեր, արիւնոտ վէրքեր  
Բացիք իմ կրծքում—բայց դուք ան-  
տարքեր  
Նայեցիք միայն ու լոկ պարձեցաք,  
Որ դուք չքնաղ եք, ինչպէս հըրեշտակ...

Եւ երբ խորտակւեց, սիրտս աւերւեց—  
Նորա արիւնոտ դուռն էլ փակւեց,  
Ամուր փականքով փակւեց լաւիտեան,  
Էլ ոչ ոք բանալ չը կարաց նորան։

\* \*

Դիցուհիները եկան այնուհետ,  
Որ նորից խաղան փակւած սրտիս հետ.  
Բայց կոլսի գգւանք, սիրանոյշ բարբառ  
Օտար մնացին փակ սրտիս համար։

Վարդը խոնարհւեց, կպաւ իմ կրծքիս,  
Իր թերթիկները դըրեց վէրքերիս.  
Բայց ըսպեղանին այդ անուշաւէտ  
Չը կարաց բուժել կուրծքս ախտաժէտ։

Մեխակ ու շուշան, յասմիկ ու նարդիս  
Անուշ բուրմունքով փարւեցին կրծքիս  
Եւ իմ վէրքերը ցօղով լըւացին.  
Բայց նոքա դարձեալ անքոյժ մնացին։

Օ, չքնաղ ծենեա! Ես քեզ կ'անւանեմ  
Մեծ հերոսուհի, ես քեզ կը պաշտեմ,  
Եթէ ինձ համար նոր սիրտ ըստեղծես,  
Վէրքերս բուժես, արցունքս սրբես...

—Theta—

Պ 0 է 8 ի ն  
(Պուշկինից)

Պօէտ, դու բընաւ մի հըլապուրել  
Համալնքի սիրով!  
Բուռն գովեստի վաղանցուկ ձայնը կը լուի  
Չուտով.  
Կը դատապարտի անմիտը, վըլադ սառը կը  
Խնդան,  
Սակայն դու եղիր հաստատ, անսասան,  
Հանդիստ ու դաժան:  
  
Դու թագաւոր ես — տապիր միայնակ! Ուր որ  
Քո անկախ  
Խելքը քեզ տանի — գնա համարձակ, ազատ  
ու անվախ,

Հասունացնելով սիրած խոհերիդ քաղցր պը-  
տուղներ,  
Վեչ գործքիդ համար չը պահանջելով վարձ  
ու նւէրներ:  
Քո մէջ են նոքա: Մեծ դատաւոր ես ինքըդ  
քեզ համար.  
Բոլորից էլ խիստ դու ես գին դնում գործիդ  
անաչառ:  
Քո գործից գոհ ես, դու խստապահանջ գե-  
ղարւեստագէտ?  
Գոչ ես դու արդեօք? Դէ ուրեմն թող ամ-  
բոխը տգէտ  
Անարգի նորան, վառւող կըլակիդ սեղանին  
թըքի,  
Մանկան չարութեամբ սուրբ զոհարանդ ցնցի,  
տատանի!

---

Սակայն Ոսկանը գոհ չէր վիճակից.  
 Նա միշտ տխուր էր, մռալլ, վշտալից:  
 Նորա հարազատ ու միակ որդին՝  
 Չը նաև իր հօր խօսք ու խրատին՝  
 Գործով պարապել բընաւ չէր սիրում,  
 Ուտում էր, խմում ու հանգիստ քնում.  
 Նա ձրիակեր էր, վատնող ու շռալլ—  
 Ենդուր էր հալը տխուր ու մռալլ:

## II

Հալը խրատեց, մտածեց երկար,  
 Ապա իր որդուն տարաւ այլ աշխարհ.  
 Նա որդուն յանձնեց մի մեծ վարպետի,  
 Որ նա սորա մօտ բանի, աշխատի:  
 Վարպետն էլ սիրով ընդունեց նորան  
 Ու նշանակեց ռոճիկ տարեկան.  
 Ոսկանի որդուն շատ չէր բանեցնում—  
 Հարուստ հօր խաթրու լաւ էր պաշտպանում.  
 Կուշտ ուտացնում էր, խմացնում նորան,  
 Հագցնում, խընամում իր որդու նման:  
 Իսկ երբ բոլորեց, լըրացաւ տարին,  
 Որդին ստացաւ վարձը լիովին:  
 Վարպետը նորան հըրաժեշտ տւեց,  
 Դէպի հալը նիք ճանապարհ գցեց:  
 Ոսկանի որդին, երբոր տուն հասաւ,

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԱՆԵՐ

Ա Յ Խ Ա Տ Ա Ն Ք

I

Հարուստ էր Ոսկան, հարուստ, մեծատուն.  
 Ունէր նա շատ փող, պատիւ ու անուն:  
 Նորա տան դուռը ձմեռ ու ամառ.  
 Միշտ բաց էր լինում ամենքի համար.  
 Քանի աղքատներ հաց էին ուտում  
 Նորա սեղանից ու նորան օրհնում:

Ստացած փողը իր հօրը տըւաւ:  
Բոլոր փողերը հայրը համարեց,  
Իսկոյն շրջւեցաւ, գետը շպրտեց,  
Ապա ժպտալով նայեց իր որդուն,  
Իսկ անհոգ որդին—ոչ ձայն, ոչ ծըպտուն:

## III

Դարձեալ Ոսկանը տխուր էր, մըռալլ,  
Իսկ նորա որդին ծոլլ էր ու շռալլ:  
Մի օր էլ հայրը՝ սաստիկ լուսահատ՝  
Կանչեց իրա մօտ որդուն բէ դօվլաթ.  
Նորան խրատեց, նախատեց երկար  
Ու տարաւ իր հետ մի ուրիշ աշխարհ,  
Ալստեղ նա որդուն տւեց վարպետի,  
Որ նա սորա մօտ բանի, աշխատի.  
Վարպետին պատմեց որդու արարքը,  
Ապա լետ գնաց իրանց աշխարհքը:  
Ալս նոր վարպետը առաջւան պէս չէր—  
Սա շատ բարկացկոտ, անդութ ու չար էր:  
Ոսկանի որդուն չէր խղճում երբէք—  
Նորան տանջում էր նա գիշեր-ցերեկ,  
Գործել էր տալիս, անվերջ բանեցնում,  
Յոգնեցնում նորան, հալումաշ անում:  
Փուչ բանի համար գոչում էր ուժգին,  
Բուռնցքով խփում շլնքակոթին.  
Նորան տըւածը դարդակ հաց էր, չոր,

Մի ձեռք էլ մաշւած ու գջլտած շոր:  
Եթէ նա լսէր իր հօր իթըրատներ,  
Զէր քաշի երբէք այսպիսի օրեր:  
Ոսկանի որդին ալնքան նիշարեց,  
Եւ խեղճի վիզը այնքան բարակեց,  
Որ նորա քթից եթէ բռնէին,  
Տեղնուտեղը կ'աւանդէր հոգին:

## IV

Վերջապէս մի կերպ տարին լըրացաւ,  
Ոսկանի որդին Տէրին վառք տըւաւ...  
Նա իր վարպետից ըստացաւ ոռձիկ,  
Պարկը շալակեց, գնաց հայրենիք:  
Երբոր տուն հասաւ, փողերը հանեց,  
Հաշւեց, համարեց ու հօրը լանձնեց,  
Երբ հայրը շրջւեց գեպի գետ կըկին,  
Ըշտապով բռնեց հօր ձեռքը որդին.  
«Հայր, աղաջում եմ, ջուրը մի գցիր,  
Արիւն-քրտինքը գոնէ խնալիր!  
Շատ թանկ են նստել ինձ այդ փողերը,  
Թանկ են տանջանքիս այդ պտուղները!..»  
Տիրութեան ամպը իսկոյն չքացաւ,  
Ոսկանը հըճւեց և ուրախացաւ.  
Նա յուզւած սրտով իր որդուն գրկեց,  
Ճակատը պաշեց ու նորան օրհնեց:

## Ե պ ի լ ո դ

Այնուշետ որդին սկըսեց բանել,  
Հօր պատւէրները լսել, կատարել.  
Նա թողեց նախկին իր շուալ կեանքը,  
Սկըսեց յարգել սուրբ աշխատանքը:



✓ 0

ԱՐԴԱՐԻՆ Կ'ՕԳՆԻ ՈՂՈՐՄԱՆ ԱՍՏԻԱԾ!

## I

Ուզում էի ձեղ պատմել մի նոր բան—  
Յանկարծ յիշեցի զրոյց պապական:  
Գուցէ շատերդ լսած կը լինէք  
Գուք այն բարեպաշտ ոսկերչի մասին,  
Որ մեղք չեր գործել իր կեանքում երբէք,  
Ոչ գողացել էր, ոչ խարել մէկին:  
Նա գըլուխը քաշ գործին էր կենում,  
Հալալ քրտինքով իր հացը ճարում.  
Շուտ-շուտ կըկնում էր սրտով երկիւղած.  
«Արդարին կ'օգնի ողորմած Աստած!»  
Նա այս խօսքերով գործի էր նստում,  
Այս խօսքերով էլ գործից վեր կենում:  
Սակայն ոսկերչի ալդ սովորովթը  
Շարժեց արքալի սրտի զայրովթը:

## II

Արդար ոսկերչին մեր արքան կանչեց,  
Թքեց երեսին ու մի լաւ ներկեց.  
«Արդարին կ'օգնի ողորմած Աստւած,  
Արդարին կ'օգնի ողորմած Աստւած...»  
Դու այս խօսքերըն այնքան կըկնեցիր,  
Որ մեր բռլորի զահլան տարեցիր.  
Տիրոջ անունը մաստակի նման  
Բերան ես գցել, ծամում լաւիտեան.  
Բաւական է քեզ, լիմար, անամօթ,  
Չ'ասես այդ բանը էլ ոչոքի մօտ!..»

## III

Եւ ոսկերչի մի ականջը մտաւ  
Արքալի խրատն, միւտով գուրս եկաւ:  
Երբ տեսաւ արքան, որ էլ ճար չը կայ,  
Ծառալին տըւեց մատնիք արծաթեալ.  
«Ճար այս մատանին, ոսկերչին լանձնի,  
Թող ոսկաջրի, շուտով լետ դարձնի...  
Ականջիդ ասեմ, ոչոք չ'իմանալ՝  
Ուշադիր եղիր, աչքըդ չորս արա—  
Տես թէ՛ որտեղ է պահում մատանին,  
Ծածուկ գողացիր ու լետ բեր կըկին!»

Եւ իր արքալի տըւած հըրաման  
Մեծ վարպետութեամբ կատարեց ծառան:  
Ոսկերչի վերալ մեր արքան ինդաց.  
«Տեսնենք, հիմա էլ կ'օգնի քեզ Աստւած...»  
Ապա մատանին ձեռքըն առնելով  
Գուրս եկաւ տնից, նետեց դէպի ծով:  
Եւ ալիքները իրար զարնւեցին,  
Ծովի անդունդը տարան մատանին:

## IV

Խեղճ ոսկերիչըն որոնեց երկար,  
Սակայն մատանին չը կար ու չը կար:  
Իր մօտ կանչելով նորան մեծ արքան,  
Խսկոյն պահանջեց լանձնած առարկան:  
Մեր ոսկերիչը լալով ծունկ չոքեց  
Ու երեք աւուր ժամանակ խնդրեց.  
«Սպասիր, արքալ, դարձեալ կ'որոնեմ,  
Ես գիշեր-ցերեկ Տէրին կ'աղօթեմ,  
Որ գտնեմ նորից մատանին կորած—  
Արդարին կ'օգնի ողորմած Աստւած!..»  
Արքան երեք օր ժամանակ տւեց  
Ու ոսկերիչին ճանապարհ գցեց:

## V

Մեր ոսկերիչը տիսուր ու տրտում՝

Ն մը քայլերով շուկան է գնում:  
 Աստեղ ծերունի մի ձկնորս նստած՝  
 Վաճառք էր հանել ձկներըն սրած:  
 Եւ ոսկերիչը մօտեցաւ ծերին,  
 Մեծ ախորժակով նայեց ձկներին:  
 Թէպէտ կորուսար մտքից չէր անցնում:  
 Բայց նորա փորը վեց-վեց էր անում:  
 Նա մի հիւթալի, խոշոր ձուկ գնեց,  
 Պոչիցը բռնած դէպի տուն դիմեց:  
 Նա բերեց կաթսան, փայտն ու ջուրը,  
 Սկսաւ պատրաստել իր կերակուրը:  
 Երբ ձկան փորը դանակով ճղեց  
 Եւ փորոտիքը քաշեց, դուրս հանեց—  
 Օ, արմանք-զարմանք!.. Մեղալ Քեղ, Աստւած,  
 Կորած մատանին յանկարծ շողշողաց...  
 Ում մտքով կ'անցնէր, որ ծովի միջին  
 Չուկը կարող էր կուլ տալ մատանին!  
 «Արդարին կ'օգնի ողորմած Աստւած!»  
 Գոչեց ոսկերիչն խիստ ուրախացած:

## VI

Նա փառաբանեց Տիրոջ տնունը,  
 Ըշտապով գնաց արքալի տունը:  
 Հենց որ մեր արքան մատանին տեսաւ,  
 Բերանը բացեց, սաստիկ զարմացաւ...

Երբ ոսկերիչըն ամեն բան պատմեց,  
 Զերմեռանդ սրտով արքան ձայն տւեց.  
 «Այժմ իմացայ, որ ճիշտ է ասւած—  
 Արդարին կ'օգնի ողորմած Աստւած:  
 Այսուհետ նոյնը ես էլ ամեն ժամ  
 Պիտի կըկնեմ ու նորան փառք տամ!..»



ԱԹԽԱՅԻ ԲԱՐԻՔԸ ԱԹԽԱՅԻ ԿՐ ՄՆԵՑ

**Տ**ատոս է պատմել, ես չեմ յօրինել—  
Տատիս էլ նորա պապն է ասել:  
Մինչև օրս էլ բերանից բերան  
Պատմում են իրար, թէ ինչպէս արքան  
Իր անժիւ գանձը հաշւել չէր կարում,  
Իր առատ ոսկու չափը չէր լիշում:  
Եհ, այնքան փողեր, ոսկի ու գոհար  
Հաշւել, համարել ով կը կարենար?  
Նայում էր գանձին շւարած արքան  
Ու չէր իմանում՝ ինչ անէր նորան:  
Վերջը մտածեց շինել իր համար  
Մի շքեղ պալատ, հիացնել աշխարհ.  
Որ մեծ ու պստիկ ամեն տեղից գան,  
Բերանները բաց՝ նայեն, շլանան:

Եւ ահա անցաւ հինգ թէ վեց տարի,  
Երբ վարպետները հմուտ և արի  
Պալատի շէնքն իսպառ վերջացրին,  
Նքեղ ապարանք հրաշակերտեցին:  
Ապարանք էր դա և ոչ ձեր գիտցած,  
Այլ ըսքանչելի մի բան չը տեսնւած!—  
Պատերը արծախ, յատակը մարմար,  
Օճորքը ոսկի, շուրջն անգին քար.  
Իսկ սիւների վրայ գեղեցիկ նախշած  
Գոհարներ էին կարգերով շարւած,  
Որ մէկը գրեմ?.. Լզմայլում էր մարդ,  
Երբ նայում էր այդ տան շքեղազարդ!

Պալատի շէնքըն աւարտած օրին՝  
Իր ողջ պետութեան բոլոր ծերերին  
Կանչում է արքան, մեծ խնճոյք սարքում,  
Երդ ու մուզիկով շատ քէփ է անում:  
Ճաշից յետ արքան դիմեց հիւրերին  
Ու կարծիք հարցըեց պալատի մասին:  
Ամենքը հերթով սկսեցին յալտնել  
Իրանց զարմանքը և շէնքը գովիել:  
Ալդպիսի մի շէնք իր ամբողջ կեանքում  
Ոչ ոք չէր տեսել արար-աշխարհքում.  
Ալդպիսի պալատ դեռ չէր կառուցւած,  
Ոչ տեսնւած բան էր և ոչ էլ լսւած:

«Ողորմած արքայ, —նկատեց մի ծեր, —  
Բոլոր հիւրերը տւին գովեստներ,  
Քո շքեղ տնով երկար հիացան.  
Բայց ապարանքիդ մի պակասութեան  
Մասին մոռացան, ոչինչ չ'ասացին—  
Խոշոր պակասը չը նկատեցին:  
Խօսք չը կայ՝ լաւ է, լաւ է ու սիրուն,  
Ոչ մի թագաւոր չ'ունի այդպէս տուն,  
Ոքանչելի է!.. բայց... ունի դռներ!  
Ախ, երանի թէ այդ այդպէս չ'ըլնէր!»

---

Յանկարծ ամենքը բարձրացրին քըքիչ,  
Ծաղրով, ծիծաղով թնդացրին դահլիճ.  
«Ա՞յլ զըդ չը կոտրի, տխմար ծերունի!  
Առանց գոների ախար տուն կ'ըլնի?  
Այ, աղբաթըդ իւէր, բերան ես բացում  
Ու այդպէս ցանցառ բաներ ես խօսում?..»  
— «Հասկացէք խօսքըս, —ասաց ծերունին, —  
Զուր էք ծիծաղում!.. Թէ չը լինէին  
Ահա այս գոները, այնժամ մեր արքան  
Այստեղ կը մնար, այստեղ յաւիտեան.  
Բայց երբ նա մի օր աւանդի հոգին,  
Հրաժեշտ պիտի տալ շքեղ պալատին.  
Այս գոհարները, անդին քարերը,  
Հարստութիւնը, բոլոր գանձերը

Նա պիտի թողնի պալատում թափած,  
Իսկ ինքը մենակ՝ դագաղում պառկած՝  
Պատանած երկու արշին կըտաւով՝  
Պիտի գուրս գնայ ահա այս գունով!..  
Դու մեզ զարմացըու, արքայ քաջարի,  
Ոչ թէ պալատով, այլ գործքով բարի!..»  
Լուց ծերունին: Մըռալեց արքան:  
Տիրեց լըռութիւն գերեզմանական...

---

Ա Ս Կ Ե Զ Կ Ն Ի Կ

## I

**Ծ**ովի եղերքին ապրում էր հըզօր,  
Սակայն ցաւագար, մի ծեր թագաւոր:  
Հազար միջոցներ, բժիշկ ու դարման  
Արքալին բռւժել չը կարողացան:  
Եւ մի աստղաբաշխ ասաց արքալին,  
Որ եթէ որսան Ոսկէ Զկնիկին,  
Նա նորան ցաւից կ'աղատի իսպառ  
Ու էլ չի տանջւիլ ալդպէս չարաչար:  
Իսկոյն տրւեցաւ սաստիկ հըաման՝  
Ծովի մէջ նետել բազմաթիւ ուռկան:  
Եւ Ոսկէ Զուկը յանկարծ շողշողաց՝  
Արքալի որդու ցանցումը գերւած.  
Նա աղաչում է մարդկալին լեզով

Աղատեն կըկին, գցեն նորան ծով.  
Նա խոստանում է ալդ բանի համար  
Թանկագին փրկանք, բարիք անհամար:  
Արքալորդին էլ խղճաց Զկնիկին,  
Նետելով ծովը, ազատեց կըկին:

## II

Երբ արքալորդին ու ձկնորսները  
Ծովն էին գցում իրանց ցանցերը,  
Աստղաբաշխը նայեց աստղերին,  
Իսկոյն գուշակեց, ասաց արքալին.  
«Հարազատ որդիդ, արքալ ողորմած,  
Հէնց ալս ըոպէիս Զկնիկին որսաց,  
Բայց խղճաց նորան, դարձեալ ծով նետեց:»  
Եւ հիւանդ արքան վշտագին գոչեց:  
— «Այլ ևս որդի չ'ունեմ ես իսպառ.  
Աքսորէք նորան մի հեռու աշխարհ!»  
Թագուհի մալլը՝ արցունքըն աչքին՝  
Կանչեց իրա մօտ թշւառ զաւակին,  
Վերջին անգամը իր կըկին սեղմեց,  
Համբուրեց նորան ու ճանբան օրհնեց.  
«Տէր ընդ քեզ, որդի! ուր էլ որ գնաս,  
Վերջին խրատս դու չը մոռանաս—  
Ընտրիր քեզ համար ընկեր ալնպիսի,  
Որ ամեն բարիք քեզ հետ միշտ կիսի,

Որ ամեն գործում լինի աջակից,  
Անքաժան եղբայր, հալալ, սըրտակից!»  
Մալը իր որդուն համբուրեց կըկին,  
Լացեց ու տւեց հրաժեշտը վերջին:

## III.

Արտաքսւած որդին՝ տխուր ու տրտում՝  
Թողեց հայրենիք, ընկաւ ճանապարհ:  
Անցնում է ձորեր, գնում է, գնում  
Ու վերջը հասնում մի օտար աշխարհ:  
Մի ընկերի հետ ալստեղ միասին  
Զըոյց արեցին, ճաշի նստեցին:  
Ընկերը կտրեց, հացը բաժանեց  
Ու մեծ բաժինը իր առաջ դըրեց:  
Մօր խօսքը լիշեց արքայի որդին  
Եւ իսկոյն ձգեց, թողեց ընկերին:  
Արտաքսւած որդին գնում է մենակ,  
Անցնում է ձորեր, հասնում մի քաղաք:  
Մի ընկերի հետ ալստեղ միասին  
Զըոյց արեցին, ճաշի նստեցին:  
Ընկերը կիսեց, հացը բաժանեց  
Ու նորա կէսը ընկերոջ տւեց:  
Մօր խօսքը լիշեց արքայի որդին,  
Իսկոյն ճանաչեց հալալ ընկերին:  
Այս ընկերի հետ նա չան ասելով՝

Անցնում է ձորեր, անցնում լեռ ու ծով՝  
Ու վերջը հասնում մի մայրաքաղաք,  
Այստեղ երկուսով վարձում մի տընակ:  
Գարձաւ ոսկերիչ ընկերն անքաժան,  
Շինեց՝ մատանիք, օդ, ապարանջան.  
Արքայորդին էլ ամեն օր տանում  
Ոսկէ իրերը՝ վաճառք էր հանում:

## IV.

Ահա մի օր էլ արքայի որդին,  
Երբ որ տարել էր ծախելու իրեր,  
Լսեց մեծ աղմուկ փողոցի միջին—  
Թէ այր և թէ կին, թէ մանուկ, թէ ծեր՝  
Իրար հըելով, ամենքն էլ վազում,  
Դէպի արքայի պալատն են դիմում:  
Արքայորդին էլ երկմըտութիւնից  
Սկըսեց գնալ ամբոխի յետից:  
Նա հասաւ պալատ և բակը մտաւ,  
Գիտես, ընթերցող, թէ նա ինչ տեսաւ!—  
Ամբոխը բակում իրար է անցնում,  
Իրար խոնւում. իսկ պատշամբում  
Արքայադուստրն էր լուռ ու մունջ նստած,  
Նորա առաջ էլ մի տղայ կանգնած:  
Երիտասարդը ջանքեր էր անում,  
Նատ ճիգ էր թափում, հնարք որոնում՝

Մի կերպ խօսացնի արքայադստեր,  
Բանայ պապանձւած լեզւի կապանքներ:  
Թէ նա խօսացնէր համը աղջըկան,  
Այսժամ կը դառնար արքայի փեսան:  
Սակայն ամեն ջանք անցնում էր ի զուր—  
Աղջիկը դարձեալ համը էր ու լուռ...  
Եւ թագաւորը, ըստ իր պարմանին,  
Հըրաման տւեց կախել խեղճ տղին:  
Իսկոյն գահիճներն բռնեցին նորան,  
Քաշեցին, տարան գէպի կախաղան:  
Թշւառ պատանին գոչեց ողբագին,  
Աչքերը չուց, աւանդեց հոգին...  
Մեր արքայորդին սարսափած վազեց,  
Եկաւ, ընկերոջ բոլորը պատմեց:

## V

Ընկերը լսեց—և խորհրդաւոր  
Ժպիտը խաղաց նորա երեսին:  
Արքայի որդուն նա հետևեալ օր  
Յայտնեց, որ ինքն այն չքնաղ կոյսին  
Անշուշտ կը բուժի, լեզուն կը բանար:  
Ոսկերիչ ընկերն արքունիք գնաց,  
Իր նպատակըն արքային ասաց,  
Նա առաջարկեց, որ մունջ աղջըկան  
Տանեն դահլիճը, իրանք հեռանան.

Իսկ թագաւորը դռան լետևից  
Դածուկ թող դիտի և լսի դրսից:

## VI

Եւ ոսկերիչը մտնում է հանդարտ  
Դահլիճը զուգւած ու շքեղազարդ:  
Ոսկեթել բարձին՝ լոիկ ու հեզիկ՝  
Բազմած էր չքնաղ արքայադստրիկ:  
Մունջ գեղեցկուհուն նա գլուխ տւեց  
Ու նորա նստած բարձին նա դիմեց.  
«Օ! բարով տեսանք, դու բարձ ոսկեթել!»  
Իսկ բարձն ասաց. «Բարով ես եկել!»  
Արքայադուստրը մնաց զարմացած—  
Նա իր կեանքումը երեկք չէր լսած,  
Որ անշունչ բարձը կարող է խօսել,  
Մարդու պէս ասել ու պատասխանել:  
«Ա, արմանք-զարմանք!.. մեղալ Քեզ,  
Աստւած!»—

Դրսիցը արքան ասում է ապշած:  
Ոսկերիչն ասաց. «Բարձ, դիտես՝ ինչ կալ?»  
—«Ոչինչ չը դիտեմ, արևս վըկալ:»  
Արքայի դուստրը ականջը սրեց,  
Ոսկերիչն էլ բարձին այս պատմեց.

## VII

«Կային, չը կային երեք ընկերներ—  
 Մի դերձակ, մի հիւսն, երրորդը՝ տէրտէր—  
 Երեքն էլ սիրով, անկեղծ ու արդար:  
 Նրանք ունէին բազմաթիւ ոչխար,  
 Որոնց երեքն էլ գիշերը հերթով  
 Պիտի հովէին արթուն աչքերով:  
 Հերթը հասնում է հիւսնին մի գիշեր.—  
 Երբ քընած էին նորա ընկերներ,  
 Նա կտրեց մի ծառ, փալտէ մարդ շինեց,  
 Կանգնացրեց գետնին ու ինքը քնեց:  
 Դերձակինն էր հերթը միւս գիշեր.—  
 Երբ քընած էին նորա ընկերներ,  
 Մթութեան միջին տեսնում է լանկարծ  
 Մի մեծ փալտէ մարդ, գետնին դիք կանգնած:  
 Նա շոր է կարում, փալտին հազցընում,  
 Իսկ ինքը պառկում, անուշ խումփացնում:  
 Երբ մեր տէրտէրը հետևեալ գիշեր  
 Տեսաւ այն կանգնած մարդկալին պատկեր,  
 Չոքեց, աղօթեց իր Տէր Աստուծուն,  
 Որ շունչ պարզեի այդ փալտէ մարդուն:  
 Նորա աղերսը Աստուծ էլ լսեց  
 Ու փալտէ մարդուն հոգի պարզեց:

Դէ, ոսկեթել բա՛լձ, ասա ինձ հիմի—  
 Այդ ասած մարդս ուժ կը պատկանի՞»

Բ Ա Ր Զ

Ի հարկէ, հիւսնին:

Ո Ս Կ Ե Ր Ի Զ (պնդելով ասածը)

Ոչ, ոչ! դերձակին!

Բ Ա Ր Զ (բարկացած)

Ոչ, հիւսնին! հիւսնին!

(Բարձը և Ոսկերիչը տաքացած  
 ոկտում են վիճել)

ԱՐՔԱՅԱԳՈՒԽՏԻՐ (Համբերութիւնը  
 հատած և հաղիւ հազ թոթովելով)

Դուք սխալում էք... Նա տէրտէրինն է!..

## VIII

Իսկոյն ներս վազեց սրտատրով արքան,  
 Գրկեց քաղցրախօս իր սիրուն աղջկան  
 Եւ ուրախութեան արցունքը աչքին՝  
 Համբուրեց, օրհնեց իր փեսացըւին:  
 Թագուհի մալրը, պալատականներ,  
 Շատ մեծամեծներ, բարձը իշխաններ՝  
 Ուրախ հրճւելով՝ դահլիճ վազեցին

Ու թագաւորի աչքը լոյս արին:  
 Ամբողջ պալատը, իբրև մարմնացած  
 Մի ուրախութիւն, թնդաց, որոտաց:  
 Արժանի փեսին ամենքը գովում,  
 Անվերջ օրհնում են ու փառաբանում:  
 Ալեզարդ արքան հարսանիք սարքեց  
 Եւ ոսկերչի հետ դստեր պլասակեց.  
 Իր գանձի կէսը տըւեց փեսալին,  
 Պետ նշանակեց իր զօրքի գլխին:

## IX

Իբրև սրտակից եղբալը անբաժան՝  
 Բարիքը կիսեց արքալի փեսան,  
 Արքալի որդուն, անկեղծ ընկերին,  
 Նա մխիթարեց, տըւեց իր բաժին.  
 Ապա դաշոյնը նա ձեռքն առաւ  
 Ու նորահարսին կիսել կամեցաւ:  
 Մեր արքայորդին աչ ու սարսափով՝  
 Ընկերի առաջ չոքած ու լալով՝  
 Խնդրում է խղճալ անմեղ աղջըկան,  
 Ի զուր չը սպանել, խընալել նորան.  
 «Ես գոհ եմ տըւած քո բարիքներով,  
 Կինդ քեզ լինի իր ամբողջ կեանքով.  
 Մի կիսիր նորան, թող նա ողջ մնայ!՝  
 Քեզ համար լինի! Օ, նորան գթա!...»

Դաշոյնը թողեց արքալի փեսան,  
 Գրկեց ընկերին և ասաց նորան.  
 «Դու արքայորդի, իմ ընկեր քաղցըրիկ,  
 Քեզ է պատկանում այս սիրուն աղջիկ!  
 Երբ հիւանդ հալըլդ զրկեց քեզ տնից  
 Ու քեզ աքսորեց իր պետութիւնից.  
 Երբ յուսահատւած ու մըտամոլոր,  
 Անցար աշխարհներ, ընկար սար ու ձոր—  
 Ես եկայ քեզ մօտ պարտքըս քեզ տալու,  
 Տարտամ վիճակից քեզ ազատելու.  
 Ես բացի լեզուն արքայադստեր  
 Միայն քեզ համար, իմ բարի ընկեր!  
 Առ դու քո հարսին և բոլոր բարիք,  
 Ճանապարհ ընկիր դէպի հալըենիք!  
 Առ և այս դեղը, այս կը տաս քո հօր  
 Եւ նա կը բուժելի իր ցաւից բոլոր!  
 Այսուհետև մենք չենք տեսնիլ իրար.  
 Յանկամ երկուսիդ բարի ճանապարհ!  
 Կ'ուզես իմանալ՝ արդեօք ով եմ ես?—  
 Այն Ուկէ Զուկն եմ, որին, լիշտամ ես,  
 Դու մի ժամանակ ծովում որացիր,  
 Խղճալով նորան, ծովը գցեցիր...»  
 Ասաց Զկնիկը, իսկոյն չքացաւ:



Ք Ե Ա Փ Ա Զ Ե Ւ Թ Ւ Ա Ի

Մանուկները հաւաքւեցին,  
Քուրսու տակը նստուեցին.  
Պապն էլ նստած ծալապատիկ՝  
Տաքանում էր նոցա մօտիկ:  
Հըճւում էին կայտառ թոռներ,  
Մերթ ճլլում, մերթ ծիծաղում,  
Մերթ ծերուկի միըքի թելեր  
Ուրախ-ուրախ քաշում, խնդում:  
Ծերուկ պապն էլ գուրգուրելով՝  
Յանկարծ «Հաֆ» էր անում խանդով,  
Իր թոռներին յանկարծ վախցնում,  
Նորանց կուշտ-կուշտ ծիծաղեցնում:  
Դուրսը ցուրտ էր, սառնամանիք,

Մռալլ, տխուր էր բոլոր երկինք.  
Խոշոր ձիւնը քուլայ-քուլայ  
Թափթփւում էր երկրիս վերայ:  
Ահա դուռը լայն բացւեցաւ  
Ու կարմրած քթով մտաւ՝  
Ծիծաղադէմ, ուրախ-ուրախ՝  
Պապի մեծ թոռն ձիւնաթաթախ:  
«Պահօ! ինչ ես դառել, Մանուկ!  
Կարծես լինես թան ընկած մուկ!»—  
Ծիծաղելով ասաց պապը.—  
«Արի, արի քուրսու տակը»:  
—«Այ պապ, այնպէս ձիւն է թափթում,  
Որ ոչ մի բան չի երևում՝  
Ոչ Մռաւ, ոչ Քեափազ սարը,  
Ոչ էլ նորա ցից կատարը!»  
Պապը տխուր գլուխը կախեց,  
Քթախոտի տուփը հանեց.  
Երկու մատով թունդ բռնոթին  
Բոնկացրեց պարալտ քթին.  
«Այ, գիդի հա!.. ժամանակ կար,  
Սար չէր հասնիլ մեր Քեափազին.  
Այնքան բարձր էր նորա կատար,  
Որ կորչում էր ամպի տակին:  
Մի պալծառ օր Քեափազ սարը  
Ու հարեւան Մռաւը լեառը

Հաց թխելիս կորու արին  
Ու մէկմէկու հայհոյեցին:

Ք ե ա փ ա զ

«Իմ վեհ գլխով շւաք եմ դցում  
Ողջ Երևան իմ տակ ծածկում.  
Իսկ դու ինչ ես!.. մի թուլ, փտած  
Հողաբլուր, թզնւկ ընկած:»

Մ ո ա ւ

«Իմ բարձունքից պարզ աչքերով  
Նայում եմ ես ողջ աշխարհին՝  
Իմ լանջի տակ քեզ թողնելով...  
Թքեմ խարխուլ քո կատարին!»

Երկու լեառը կատղած կերպով  
Մոնչացին բարձր ձախով.  
Դաշտեր, ձորեր նորանց վէճից  
Որոտացին միանգամից:  
Աչա վէճը մարտի փոխւեց.—  
Եւ Քեափաղը շամփով զարկեց  
Իր հարեւան Մռաւ լեռան,  
Լանջը ճեղքեց, կիսեց նորան:

Մռաւն էլ իսկոյն՝ սաջը \*) վերցրեց  
Ու Քեափաղի ճակտին խփեց.—  
Գղղդաց շուրջը... լեառը փըլաւ,  
Գոռոզ կատարն խորտակւեցաւ...  
Մարդիկ, գազան և անասուն՝  
Սարսափահար ու շշկւած  
Այս ու այն կողմ վազվեցին—  
Զը գիտէին՝ ուր փախչէին:  
Լեռ-քարերի զըդուոցը  
Ու շըջակայ դղբոցը  
Երկու ամիս չէր դադարում,  
Չէր գարարում ու վերջանում:  
Աստւած մեզնից հեռու տանի,  
Շատ դժւար էր, զարհուրելի!..  
Գուք տեսել էք Գեօդ-դեօլ լիճը,  
Այն՝ որ մեծ-մեծ ձուկ կալ մէջը?  
Նորա տեղում մի ժամանակ  
Հոսում էր մի փոքրիկ գետակ.  
Երբ որ լեառը խորտակւեցաւ,  
Զըի առաջն կըտըւեցաւ:  
Հաւաքւելով, հաւաքւելով՝  
Զուրը կանգնեց, դարձաւ մի ծով.

\*) Բոլորաձև երկաթէ թիթեղ, որի վերայ հաց  
են թխում:

Երբ Քեափազը հտնգստացաւ,  
Նայեց լճին ու զարմացաւ...»

Պապը լռեց։ Դեռ բաց-բերան  
Նայում էր մեծ թոռը նորան.  
Իսկ վոքրերը լոիկ-մնջիկ՝  
Քնած էին արդէն քաղցրիկ։

Ա Մ Ի Բ Ա Ն

I

Մեզնից ոչ հեռու, Վըրաց աշխարհում,  
Կովկաս լեռների լանջերից մէկում,  
Ուր Լեախւա գետն է հոսում փրփրած,  
Քարափի գլխին հովիւ էր նստած։  
Նա նըւագում էր իր սալամուրին \*)  
Ու հանգիստ տալիս իր ոչխարներին։  
Քաղցը հնչիւնը սալամուրիի  
Եւ կարկաչիւնը արծաթ ջրերի,  
Իրար խառնւելով բընութեան ծոցում,  
Մի կախարդական երգ էին կազմում։  
Անուշ գեղգեղից ձորեր, սար ու քար

\*) Սրինդ։

Հզմայլում էին, ձախ տալիս իրար:  
 Զահէլ վրացին երգից տաքացաւ  
 Ու իր խաշներին խալառ մոռացաւ:  
 Հօտի առաջնորդ երկու այծերը  
 Քաշւեցին հեռու, դէպի լեռները,  
 Ոչխարներին էլ իրանց հետ տարան,  
 Հովիւի աչքից հեռացան, կորան:

## II

Եւ հըրապուրւած հովիւն ըսթափւեց,  
 Թողեց սրինգը, իր շուրջը նալեց,  
 Բայց հօտը չը կար... Խակոյն նա իջաւ  
 Քարափի գլխից, մահակն առաւ,  
 Դէպի լեռները գնաց վազէվազ,  
 Ցիրուցան հօտը ժողվեց հազիւհազ:  
 Բայց չարաճճի երկու այծերը,  
 Տըմբտըմբացներով ձիգ միրուքները,  
 Երկայն պոզերը օդում շարժեցին,  
 Կամակոր ձախով պինդ մըկըկացին.  
 Ալա թոչելով քարափից-քարափ,  
 Վազեցին, հասան ևեախւալի գետափ:  
 Հովիւը լոգնած՝ վազում էր, վազում—  
 Ճարպիկ այծերին հասնել չէր կարում:  
 Գետի եղերքից այծերը փախան,  
 Վազեցին ձորը ու աչքից կորան:

Հովիւը քրտնած՝ վազում էր, վազում—  
 Ըմբոստ այծերին գտնել չէր կարում:

## III

Եւ մեր հովիւը լոգնած, շնչասպառ՝  
 Ահա քարձրացաւ մի սարի կատար.  
 Երկար աչք ածեց, նալեց իր չորս դին,  
 Փախած այծերը դարձեալ չը կալին:  
 Եւ լանկարծ լսեց խոր-խոր ձորերից  
 Մի հսկայական ձախ ահըռելից.  
 Ահ ու սարսափից հովիւը ցնցւեց  
 Եւ արձան կտրած՝ ականջը լարեց:  
 Ալդ զարհուրելի ձայնիցը դաժան  
 (Ոչ որոտմունք էր և ոչ էլ գազան)  
 Լեռներ ու ձորեր դզբդում էին  
 Ու դզբդոցը վերացնում երկին:  
 Իրան սիրտ տալով՝ հովիւը ջահէլ  
 Դէպի ալդ ձախնը ըսկըսեց քալել:  
 Քանի հովիւը առաջ էր գնում,  
 Ալնքան ալդ ձախնը հուժկու էր դառնում:

## IV

Եւ նա պոտեանից դաշոյնը հանեց,  
 Մի մեծ քարայրի առջևսում կտնգնեց:

Ապա երեսը խաչակնքելով՝  
Ներս մտաւ ալրը ահ ու սարսափով:  
Եւ ինչ է տեսնում!—Յատակի վերայ  
Պառկած գոչում է մի մեծ աժդահալ...  
Հովկի ծնկները ահից դողացին,  
Գլխի մազերը բիգ-բիզ ցցւեցին...  
Հաստ շղթաներով կապւած, կաշկանդւած՝  
Հսկան փոււած էր, գետնից ամրացրած:  
Նա մոնչում էր, ուժգին հառաջում,  
Ահարկու ձայնով ալրը տատանում.  
Ճգնում էր փշրել շղթան ամրակուռ,  
Բալց նորա ջանքըն անցնում էր ի զուր:  
Նորա մի կողքին մի թուր էր ընկած,  
Իսկ միւս կողքին էլ դրած էր չոր հաց:  
Շղթալած ձեռքը թրբին էր մեկնում,  
Բալց նա հեռու էր, ձեռքը չէր հասնում.  
Ամուր կապանքը ճգում էր կրկին,  
Ցուսահատ գոչում, հառաջում ուժգին:

## V

Հովիւը շրջւեց և ուզեց փախչել,  
Բալց հսկան լետից ըսկըսեց ձայնել.  
«Մի փախիր ինձնից, դու ով բարի մարդ,  
Եկ, ինձ մօտեցիր անփախ ու հանդարտ!»  
— «Ասա ինձ, ով ես, վիթիսարի հսկալ?»

Զար ոգի ես դու, թէ քըրիստոնեալ?»  
«Ես նա եմ, որը ճեղքեց ամպերը,  
Սլացաւ վերև, դէպի աստղերը.  
Ես նա եմ, որը երկինք վերացաւ,  
Յիսուսի կողքին փառ քով բաղմեցաւ.  
Ես նա եմ, որը չը հընազանդւեց,  
Տիրոջ պատէրը ոտնատակ տըւեց.  
Ես նա եմ, որը երկնքից արդար  
Գողացաւ կրակն ու բերեց աշխարհ՝  
Ինձ արգելած էր, բալց ես դողացալ,  
Այդ պատճառով էլ այս օրին հասալ.  
Ես նա եմ, որին ամբողջ Վըրաստան  
Վաղուց լիշում է, կոչում Ամիրան»...

## VI

Հէնց Ամիրանի անունը լսեց,  
Իսկոյն հովիւը երկիւղից ցնցւեց.  
Նորա աչքերը լանկարծ մթնեցին,  
Նա տատանւեցաւ ու փոււեց գետնին:  
Իսկ Ամիրանը առաջւալ նըման,  
Ուժգին գոչում էր, ձգձգում շղթան:  
Երկար դարերով հսկան բանտարկւած  
Իր մթին ալրում, շղթալով կապւած,  
Արցունք էր թափում, դառըն հեկեկում,  
Առտուծոյ տըւած պատիժը կրում:

Եւ հըլեշտակը երկնից ամեն օր  
Բերում էր այրը մի հացի կտոր.  
Իսկ եօթը տարին հազիւ մի անդամ  
Քարայրի պատը բացւում էր առժամ,  
Արևի շողքը քիչ ներս էր մտնում  
Ու դարձեալ փախչում, բանտը մթնացնում:  
Այսպէս Ամիրան իր մեղքի համար  
Քետնից շղթայւած՝ տանջւում էր երկար:

## VII

Երբ որ հովիւը քիչ ուշքի եկաւ,  
Հսկան խրախուսեց, նորան սիրտ տըւաւ:  
Հովիւը տեսաւ նորա տանջանքը  
Ու յալտնեց իրա սրտի ցաւանքը.  
«Թէ ես կարենամ, թէ ձեռքովս գայ,  
Անշուշտ քեզ կ'օգնեմ, տառապեալ հսկայ»:  
— «Սուրս մօտեցրու!.. Սուրս թէ ինձ տաս—  
Ես կը խորտակեմ այս ծանր շղթաս»:  
Բարի հովիւը երկար չարչարւեց,  
Բայց սուրը ծանը էր, տեղից չը շարժւեց:  
— «Օ, աղաջում եմ, շուտով տուն վազիր,  
Պարան կամ շղթակ բեր, սըրիս կապիր.  
Այնժամ պարանով սուրըս կը քաշեմ,  
Կը մօտեցնեմ ինձ, շղթաս կը փշըմ.  
Եւ երբ ազատւեմ իմ կապանքներից,

Թանկագին փրկանք կը ստանաս ինձնից:  
Սակալն զգոյշ կաց, որ վերադարձին  
Զը խօսես բնաւ, չը խօսես ճանթին!..»

## VIII

Հովիւն իսկոյն ճանապարհ ընկաւ,  
Վազէվազ գնաց, իրանց տուն հասաւ:  
Նա առաւ իր հետ հաստ-հաստ պարաններ  
Ու մի քանի հատ ամուր շղթաներ.  
Անխօս, լուռ ու մունջ գուրս ելաւ տնից,  
Գէպի քարայրը ըշտապեց նորից:  
Նա գեռ չէր հասել հսկալի բանտին,  
Երբ որսորդները նորան բռնեցին.  
«Ել! ուր ես տանում շղթան, պարանը?  
Շուտ ասա, թէ չէ բուրդ է քո բանը!»  
Հովիւը լուռ էր, ոչինչ չէր խօսում:  
Բայց որսորդները նորան չարչարում,  
Քաշքում էին, ծեծում անխնայ,  
Որ հարց ու փորձին նա պատասխան տայ:  
Համբերութիւնից հովիւն ելած,  
Պաշունը հանեց, գոչեց կատաղած.  
«Հառամզադաներ! ինձ հանգիստ թողէք,  
Թէ չէ բոլորիդ կը մորթեմ մէկ-մէկ!..»

Յանկարծ երկինքը ուժգին որոտաց,  
Ամբողջ աշխարհը թնդաց, դղրդաց.  
Լեռան գագաթից պոկեց մեծ ժայռը,  
Գլորւեց ներքեւ, դեպի քարայրը:  
Եւ որսորդները երկիւղից փախան,  
Նազաստակի պէս ձորում կուչ եկան:  
Վազեց հովիւը, վազեց շնչասպառ,  
Հասաւ ալրի մօտ... բայց ճանբալ չը կար—  
Վիթխարի ժայռը անլողողդ կուրծքը  
Թեքել էր ալրին ու փակել մուտքը:  
Եւ յուսահատւած հովիւը լացեց,  
Երկար հեկեկաց, հսկալին կանչեց.  
Բայց ժայռի տակից պատասխան չը կար:  
Լեռներն էին ձալն տալիս իրար,  
Միանում հովւի ողբին դառնադին,  
Ընդհանուր սուգը վերացնում երկին...

Եւ Ամիրանի տխուր վախճանը  
Այժմ էլ լիշում է ողջ Աղբաստանը.  
Մինչև հիմա էլ Կովկաս լեռներում,  
Որտեղ Կաղբեկն է երկինք ամբառնում,  
Մեր մեծահոգի հովիւի տարած  
Շղթաներն են գետնին թափթփած:

**Ճ**ատ պարզերես էր մարդկանց առաջին  
իր բարի գործքով մեր Մաթոս ամին:  
Ողոմութիւն էր նա միշտ բաժանում,  
Որբին, աղքատին օգնում, խընամում:  
Նա բարեպաշտ էր և աղօթասէր,  
Կարգում էր յաճախ սրբազան գրքեր՝  
Նարեկ ու Սաղմոս, սուրբ Աւետարան,  
Վարք Սըբոց, Մաշտոց ու Կտակարան:  
Ամենքը նորան միշտ լիշում էին,  
Գովեստներ ձօնում նորա անունին:

Եւ մեր կրօնասէր, բարեգործ ամին  
Ունէր մի երկար զուռնա աշագին:

Հէնց որ տալիս էր աղքատին սոված  
Մի քանի կոպէկ, կամ մի պատառ հաց.  
Հէնց որ իր ծախքով մեռել էր թաղում,  
Կամ թէ պանդուխտին իր տուն ընդունում,  
Իսկոյն վազում էր, կանգնում կըտուրին,  
Իր երկար զուռնան դնում բերանին.  
Ածում էր զուռնան, բարձրածալն փչում,  
Իր բարի գործքը աշխարհին յայտնում:

## III

Եւ նա հմտութեամբ փչում էր զուռնան  
Ու նրա միջով պատմում ամեն բան:  
Խօսող զուռնալի ձայնին անուշիկ  
Ականջ դնելով ըզմալլւած մարդիկ՝  
Փառք էին տալիս բարի Մաթոսին,  
«Մաշալլա» ասում նորա արածին:  
Ամին լսելով ալդ գովեստները,  
Անվերջ ովսաննան ու կեցցէները,  
Հրճում էր, խնդում նա ինքըն իրան,  
Պարծենկոտութեամբ զլում իր զուռնան:

## IV

Յետոյ Մաթոսը կտրից իշնելով  
Գնում էր ժամը երկիւղած դէմքով.

Ժամի մէջտեղում չոքում էր ամին,  
Զեռքերը պարզում դէպի սուրբ երկին.  
Նա աղօթում էր, սազմոսներ երգում,  
Տիրոջ անունը բարձրածայն օրհնում:  
Եւ ժողովուրդը տեսնելով նորան՝  
Դարձեալ կրկնում էր նախկին «մաշալլան».  
«Լոյս դառնայ հօգիդ, այ Մաթոս ամի!

Դու գոգին նստես Հալր Աբրահամի!»

## V

Բայց ներողութիւն, շեղւեցինք հարցից!  
Չորս գլուխ անցանք այս պօէմայից,  
Սակայն Մաթոսի երազի մասին  
Ոչինչ չասացինք մենք ամենևին:  
Թողնենք մենք հանգիստ Մաթոսի զուռնան,  
Մի կողմը թողնենք մարդկանց ովսաննան,  
Ու տեսնենք՝ թէ ոնց գիշերն երազում  
Ամին լիշում է ու մէկ-մէկ թըւում  
Իր արած բոլոր բարի գործերը,  
Պարծանքով ծեծում դրախտի դռները:

## VI

Եւ նրա առաջ ահա բացւեցան  
Ոսկեղօծ գռներն սուրբ Արքալութեան:

Երկու հըրեշտակ փայլուն թևերով՝  
Շեմքի մօտ կանդնած արթուն աչքերով՝  
Զեռքերին բոնած հըրեղէն թուրը՝  
Պահպանում էին դըրախտի դուռը:  
Դուան մօտ կանդնեց մեր Մաթոս ամին,  
Հիացած, ապշած նալեց դըրախտին.  
Նախում էր հեռւից և սքանչանում,  
Բերանը բացած՝ անվերջ հիանում:

## VII

Ծաղկազարդ, կանաչ դըրախտի միջին,  
Աստղերով զուգւած իր հզօր գահին  
Վեհ ու մեծապանծ բազմել էր Աստւած,  
Նորա աջ կողմն էլ Արդին էր նստած:  
Խսկ Հոգին Սուրբը նոցա վերև  
Աղաւնու նման բացել էր թևը,  
Լոյս ու շնորհքը տարածել չորս դին  
Ու պատսպարել բոլոր սրբերին:  
Եւ հրճում էին սրբերը, երգում,  
Սուրբ Երրորդութեան մաղթանքներ ձօնում:

## VIII

Սուրբ հըրեշտակները վարդերի միջին  
Թռչկոտում էին, փառք տալիս Տէրին:

Եւ ահա յանկարծ Եղիայ մարգարէն  
Առաջ սըլացաւ կառքով հըրեղէն,  
Գըրախտից ելաւ, ճեղքեց ամպերը,  
Հեռացաւ դէպի երկնի խորքերը.  
Բարձր երկինքը նա որոտացըեց,  
Առատ անձրւը աշխարհ ուղարկեց:  
Մարգարէն կրկին յետ վերադարձաւ  
Եւ ծառաստանում իսկոյն չքացաւ:

## IX

Մի փոքր հեռու նստած էր հանդարտ  
Ծառի ստերում մի ծեր ալեզարդ.  
Բոլոր թոռներին նստեցըած գոգին՝  
Օրչնում էր նորանց, շոյում կաթոգին. —  
Հայր Աբրահամն էր... ամին ճանաչեց  
Ու պատկառանքով հեռւից ողջունեց:  
Եւ յանկարծ Դաւիթ զարկեց լարերին,  
Քաղցր դայլայլ տարածեց չորս դին.  
Հըրեշտակները իսկոյն ժողւեցան,  
Միացան անուշ սաղմոսերգութեան:

## X

Մաթոս ամին էլ իր զուռնան հանեց,  
Դըրեց բերանին և առաջ քայլեց:

Սակայն պահապան հըրեշտակները  
Խսկոյն մեկնեցին իրանց թրերը  
Եւ խափանելով Մաթոսի ճանքան՝  
Թողլ չը տւեցին ներս մտնել նորան.  
«Ի սէր Աստուծոյ, միք կտրիլ ճանքաս,  
Թողէք ներս մտնեմ ու փչեմ գուռնաս!»  
— «Դու արժանի չես սուրբ Արքայութեան,  
Դժոխքն է միայն տեղդ խսկական»:

## XII

Ամին Շլւարեց. նա բերանը բաց՝  
Տեղնուտեղլ քարացած մնաց.  
«Ախար ինչու է?.. Այ ջանըմ!.. Փիէ!..  
Մէկ ասէք տեսնեմ, իմ մեղքն ինչ է,  
Որ դուք կտրում էք դըրախտի ուզին,  
Դըժոխքը դրկում ինձ ալէս արդարին?  
Բաս բարի գործքս, էնքան ծախսերըս?  
Բաս էն կարդացած սուրբ-սուրբ գըքերըս?  
Բոլոր արածըս ոչինչ ձեզ համար?  
Պասըս, աղօթքըս մոռացաք խսպառ?»

## XIII

Հըրեշտակները լուռ ըսպասում էին՝  
Թէ էլ բնչ կ'ասի մեր Մաթոս ամին.

«Ճեր բարձունքներից միթէ չէք լսում՝  
Թէ ողջ աշխարհը ոնց է ինձ գովում?  
Զուռնալիս ձախը միթէ չը լսաք,  
Նորա պատմածը միթէ չիմացաք?  
Նորա զիլ ձայնից թնդաց աշխարհքը,  
Իսկ չըհասկացաք դուք իմ արարքը?..  
Մեր Տէր Աստուծուն ես կը բողոքեմ,  
Երկուսիդ վերալ գանգատ կը գրեմ!..»

## XIII

Եւ հըրեշտակները դառը ժպտացին  
Ու Մաթոս ամուն պատասխանեցին.  
«Երբ դու աջ ձեռքով բարի գործ անես,  
Զը պիտի քո միւս ձեռքին իմացնես.  
Իսկ դու օդնել ես խեղճին, աղքատին,  
Որ լոկ թոզ փչես մարդկանց աչքերին:  
Դու գողացել ես ուրիշի փողը,  
Ծածկել երեսիդ սրբութեան քօղը,  
Որ վարպետօրէն ալդ քօղի տակին  
Թագնես աշխարհից քո խարդախ հոգին:

## XIV

«Մարդիկ կուրօրէն հաւատացին քեզ,  
Համարեցին քեզ անքիծ, սըբի պէս.

Նորանք չ'իմացան վարմունքըդ անարդ  
Ու փառք տւեցին անունիդ մեծարդ...  
Հիմա էլ զուռնադ բերնիդ ես դրել,  
Ուզում ես մեզ էլ մարդկանց պէս խաբել:  
Եթէ գու իրօք արդար ես, անբիծ,  
Ահա եկ, անցիր Մազէ Կամուրջից!  
Ալժմ կ'երևայ՝ թէ ով է Մաթոս,  
Որ եկեղեցում երգում էր Սաղմոս...»

## XV

Սարսափած կանգնեց մեր Մաթոս ամին,  
Բայց հրեշտակները՝ խփելով վզին՝  
Դէպի Կամուրջը քարշ տւին, տարան  
Եւ ըստիպեցին անցնելու նորան:  
Նա՝ լեղապատառ ու դողդողարով՝  
Սկսեց քայլել Մազէ Կամուրջով.  
Սակայն Մաթոսի ծանր մեղքերը  
Ճնշեցին վերից բարակ մազերը.  
Սոքա դիմանալ չը կարողացան  
Գործած մեղքերի սաստիկ ծանրութեան:

## XVI

Ճնշւած մազերը ամուր ձգւեցին,  
Պինդ տրաքտրաքւեցին ու կտրատւեցին—

Գլորւեց Մաթոս, ընկաւ դըժոխքը,  
Մուալլ անդունդի ահուելի խորքը...  
Եւ ալդ ճգնալից, ահեղ ըոպէին  
Զարթնեց իր քնից զարհուրած ամին.  
Խելագարի պէս անկողնուց ցատկեց,  
Գոռում-գոչումով «օգնութիւն» կանչեց:  
Հարեանները իսկոյն վազեցին,  
Մաթոսի տունը եկան, ժողւեցին:

## XVII

Այ Մաթոս ամի, այ աղբաթըդ իսէր!»  
Ինչ է պատահել քեզ հետ ալս գիշեր?  
Քո տանը պառկած՝ երազ ես տեսնում  
Ու մեզ ամենիս սրտաճաք անում?  
Իսկ մենք կարծեցինք՝ թէ գող է եկել,  
Սըդար գըլուխդ ուզում է կտրել!..»  
— «Ոչ! ես արդար չեմ! արցունքը աչքին՝  
Գոչեց լուսահատ մեր Մաթոս ամին,—  
Իմ տանը գող կալ, գուք չէք սխալւել.  
Չեր կարծած գողը հէնց ես եմ եղել!..»


Վ Ե Ր Զ

Մարգարիտին	.	.	.	.	.	49
Մուղային	.	.	.	.	.	59
Ցիշիր ժամն այն երջանիկ	.	.	.	.	.	26
Ն-ին	.	.	.	.	.	11
Ոչ աղջամուզ, ոչ փոթորիկ	.	.	.	.	.	23
Ոսկէ Զկնիկ	.	.	.	.	.	78
Որ իմ սիրտը հասկանաս	.	.	.	.	.	5
Պօէտին	.	.	.	.	.	62
Սևանի վերայ	.	.	.	.	.	15
Տիկ. Սալինիկ Զմշկեանին	.	.	.	.	.	57
Փերի	.	.	.	.	.	33
Քեափաղ և Մռաւ	.	.	.	.	.	88
Քեզ	.	.	.	.	.	21
Քներդ	.	.	.	.	.	51
Օ, չարաձճի գեղեցկուհիներ	.	.	.	.	.	60

Ամիրան	.	.	.	.	.	93
Այրի մօր գուրգուրանքը	.	.	.	.	.	47
Աշխատանք	.	.	.	.	.	64
Աշխարհի բարիքը աշխարհում կը մնայ	.	.	.	.	.	74
Արդարին կ'օգնի ողորմած Աստւած	.	.	.	.	.	69
Աւետիս տեին	.	.	.	.	.	13
Գողթնիք	.	.	.	.	.	17
Գուռ ուզում ես, որ հնչեցնեմ	.	.	.	.	.	30
Երազ	.	.	.	.	.	3
Զատիկ	.	.	.	.	.	45
Էրիստովին	.	.	.	.	.	28
Իմ իդէալին	.	.	.	.	.	53
Լեռնիկին	.	.	.	.	.	43
Ծննդեան տօնին	.	.	.	.	.	42
Կոյս	.	.	.	.	.	14
Կովկաս	.	.	.	.	.	9
Համբ սէր	.	.	.	.	.	19
Հրաժեշտ	.	.	.	.	.	7
Հրեշտակ	.	.	.	.	.	31
Մաթոսի երազը	.	.	.	.	.	101



ՅԱՆԿ



ԷՊՈՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՅԱՐԱՒԹԻՒՆ ԹՈՒՄՈՆԵԼՈՅ

	Ը.	Կ.
1) ԽՕԼԵՐ, Վօղըվիլ մէկ արարւածով . . . —	10	
2) ԱՐԻՈՒԹԵԱՆ ԹԵՒԵՐԸ (թարգմ.) . . . —	30	
3) ԱՄՈՒՐԻՆ . . . . . . . . . . —	20	
4) ՀԱՆԱՔ ու ԴԱՆԱԿ (I զիբբ) . . . . —	30	
5) ԲԱՆԱՍՑԵՂԾՈՒԹԻՒՆԵՐ . . . . —	50	

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝ Տիֆլիս, Չաւչավաձևեցայ, ծ. Մարկարօս Ն<sup>o</sup> 25-ա



ՀՀ Ազգային գրադարան



NL0339935

31944

